

Բաժանորդագրին կԱՆԻՅԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 շրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլ. ուրիշ երկիրներու համար 12 ֆր. Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոջմ կ'ընդունուի 1 շրշնոցը 34 փարսյե հաշ- տով, կամ 100 շրուշի փոխարէն 115 շրշ: ԾԱՂԻԿ վերաբերեալ ամէն գործի համար զիմեւ

Առ Յնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Փ. ՓԱՂԱԳԱՇՅԱՆ Պոլիս, Պահչէ-Գաբու, Թաշխան, քիւ 50

40 փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

# Ծ Ա Ղ Ի Կ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند

•• نومروده « ذاغيك » غزتهسى مديرى

بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 24

Շ Ա Ր Ա Յ

28 ՄԱՐՏ 1892

Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ

## Յ Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Տ Ա Ր ՈՒ Թ Ե Ա Ն

ԾԱՂԻԿԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հըրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտակեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըրնան արտադրիչներն ապահովել: Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրանաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակիցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Փ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ գաբու, Թաշխան, քիւ. 50:

## Գ Ա Ի Ա Ռ Ա Ց Ի Ո Ց Հ Ա Մ Ա Ր Կ Ա Ր Ե Ի ՈՐ Ա Ջ Դ

Գաւառաց մէջ շատ անգամ կը պատահին այնպիսի դատեր ու գործառնութիւններ որոնք, իրենց բնութեամբ և ըստ օրինի, Պոլիս փոխադրուելով միայն կրնան շարունակուիլ և իրենց լուծումը գտնել. այս կարգէն են վճառվիչ Ատենին ներկայանալի դատերը (քէմիզ), օտար հպատակաց հետ դաւառաց մէջ տեսնուած դատերուն, վերաքննութիւնը (խսքիւնաֆ), Թէսթրֆաքր Շէրի վերաբերեալ դատեր, Ֆէրվահանէի վերաբերեալ ործեր, և այլն, և այլն:

Գաւառացիք յաճախ պարտաւորուած կը լինին այսպիսի դատերու և գործերու համար ի Պոլիս փոխադրուել մը կարգել իրենց, բայց դիւրութիւն չունենալով ձանձնալու մայրաքաղաքիս փաստաբանաց բազմութեան մէջ վստահելիները ու ձեռնհասները, հազար դժուարութեանց կը հանդպին, և յաճախ անկարող կամ անփոյթ մարդոց գործ յանձնելով, վերջ ի վերջոյ կը կորուսանեն իրենց իրաւունքը:

Գատական այս կարգի խնդրոց մէջ գաւառացւոց ծառայութիւն մը մատուցանելու համար, «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակը կապակցութիւններ հաստատած է մայրաքաղաքիս ամենէն ձեռնհաս փաստաբաններէն մի քանիին հետ: Կը հրաւիրուին այս կարգադրութենէն օգտուիլ նոքա որք այդ տեսակ գործեր ունին:

## PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Ց

### Մ Ե Ծ Գ ՈՐ Ծ Ա Տ ՈՒ Ն Վ Ի Տ Ա Ն Ո Ն Ի

Հիմնեալ 1597 ին յ'Աննօնէ

Դրամադրուի 3,150,000 Ֆրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հանրի Ժարտօն, Պարնաթան Խան



Գրասենեկի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրութեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան տեսակ ստուարաթղթեր (մուխավա), լուսանկարչական թուղթեր, մագաղաթանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն:

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել «ԾԱՂԻԿ» ի խմբագրատունը:

20—20

# MAISON PHÉNIX

Բերա, Բասափ տիւ Թիւնէլ

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձեւակեղինաց եւ Բեդեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Բիւնպէրկի աշխարհածանօթ գործատուններէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորաձեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուռքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

### ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

|   | Հատը     | Ղրշ.      |
|---|----------|-----------|
| Շապկի կտակեայ . . . . .                                       | 14 էն    | 47 1/2    |
| » գունաւոր տպածոյ . . . . .                                   | »        | 10 էն 28  |
| » Ֆանէլա . . . . .  | »        | 21 էն 42  |
| » գիշերանոց . . . . .   | »        | 12 էն 27  |
| Անդրազարտիկ . . . . .   | »        | 10 էն 21  |
| » մատամբոլ . . . . .  | »        | 15 էն 22  |
| Օձիք կտակեայ . . . . .  | տուզինան | 17 էն 54  |
| Թեւնոց . . . . .  | »        | 29 էն 65  |
| Թաշկինակ այլ և այլ տեսակ . . . . .                            | »        | 14 էն 135 |
| Գուլպաներ՝ Ֆիլ տիէքոս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ . . . . . | »        | 29 էն 145 |
| Փողկապ այլ և այլ տեսակ . . . . .                              | տուզինան | 3 էն 19   |

### ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

|   | Հատը  | Ղրշ.     |
|---|-------|----------|
| Շապկի՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրօտրրիով . . . . . | 15 էն | 27       |
| » » » տանթեւայով . . . . .                        | »     | 18 էն 31 |
| Վարտիկ » » » » . . . . .                          | »     | 14 էն 22 |
| Վարտիկ » » » պրօտրրիով . . . . .                  | »     | 11 էն 24 |
| Միսօ » » » » . . . . .                            | »     | 20 էն 38 |
| » » » տանթեւայով . . . . .                        | »     | 25 էն 65 |
| Քօրսէ՝ Բարիզի կուրտէ գործատան . . . . .           | »     | 26 էն 70 |
| Քօրսափ բամպակեայ, մետաքսեայ . . . . .             | »     | 11 էն 26 |
| Փանէլա լաւագոյն տեսակէն . . . . .                 | »     | 15 էն 40 |

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

|  | Ղրշ.       |
|--|------------|
| Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով . . . . .  | 20 էն 39   |
| » » գունաւոր 6 և 12 » . . . . .                  | 65 էն 145  |
| Անկողնոյ ծածկոցք մէթրը . . . . .                 | 9 էն 17    |
| Գուլպայ՝ Ֆիլ տիէքոս, բրդեայ, բամպակեայ . . . . . | 40 էն 145  |
| Կտաւ Վիշիի, մէթրը . . . . .                      | 3 էն 5     |
| Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն . . . . .        | 2 էն 5 1/2 |

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկ»ի Յանձնակատարութեան Գրասենեակին: 16—52

### Նիքօրա Անտրիօսեօ

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ  
Ի Պոլիս, Լուսիւան Պայագիտ,  
Քէօքիէի պաշտ, Թիւ 99

Լուսանկարչատանս մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ՝ Եւրօպայէ նոր հասած բազմաթիւ նորաձեւար գործիքներով, Պ. Ն. ԱՆՏՐԻՕ. ՄէնՕ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները: Յաճախորդներն կատարելապէս գոհացնելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԿը ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւանուի, կրկին և կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւանուի. զիջողութիւն մը զոր մայրաքաղաքին ո՛չ մի լուսանկարիչ յանձնակառնու: Կ'ազդարարեմք մեր բազմաթիւ յաճախորդաց որ, ինչպէս յստակ և պայծառ օրեր, նոյնպէս և անպատ և մատակարարատ օրեր լուսանկարք կը հանուին ամենայն յաջողութեամբ: Նորհիւ նոր գիւտերու: Կը խնդրուի զգուշանալ կարգ մը նորեկ լուսանկարիչներէ որք կը գոյժեն մեր անուամբ: 10—12

### ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԿԼԽՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէֆուպլիք փողոց, Լիոն (Ֆրանսա)

Ապահովութեւլ Գրասենեակի 100,000 000 ֆր.

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ հաստատուած է նպատակաւու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերականգնել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերականգնութիւն: Երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

ԹՐՕՎԱԹՕՐԷ. — Ողբերգութիւն ի չորս արարս. հեղինակ Վէրտի. Թարգմանեց Վահան Յ. Քիւրէճեան. հրատարակեց Ղրավաճառ Յակոբ Աղամալեան: Գին 2 դրուշ:

ՄԵՆԵՍԼ ԿԻՆԸ. — Հեղինակ Օզթալ Յէօյիէ. Թարգմանեց Միհրան Թէլեան. — «Մաղիկ»ի մէջ մաս առ մաս հրատարակեալ այն թարգմանութիւն, որ եգական սեռի դաստիարակութեան վերայ վիպածէ հետաքրքրաշարժ ուսումնասիրութիւն մ'է, առանձինն ևս հրատարակուած լինելով, կը ծախուի ի գին 10 դրուշ. Թուղթը և տխուր մաքուր է: դիմել «Մաղիկ»ի գրասենեակը:

Բաժանորդագրին կԱՆԻՍԻԿ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, իսկ արտասահման համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու համար 10 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոջմ կ'ընդունուի՝ 1 դրշնոցը 34 փարայի հաշուով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ:

ԵԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիծկ:

Ս.Ս. Տիօրէն-Հրատարակիչ  
ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱՂԱԳՍԱՇԵՍՆ  
Պալիս, Պահչէ-Գարու, Թաշխան, քիւ 50

# Տ Ա Ղ Ի Կ

## Լ Ր Ա Պ Ի Ր

درعليده بفتحه قوسنده طاش خاندند  
•• نومروده «زاغيك» غزتهسى مديرى  
بالاقاشيان حوونان

S'adresser à  
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,  
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50  
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուր տարածուած էր թէ աքսորեալ երկու սինոզական եպիսկոպոսք, Սուքիաս Պարզեանց եւ Ներսէս Խիւտավերտեան, կայսերական ներման արժանանալով, պիտի դառնան յէջմիածին՝ Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու: Այս լուր կը հերքուի:

— Երուսաղէմէն մեզ կը գրեն. «Երուսաղէմայ թեմին կողմանէ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար աշխարհական պատուիրակ ընտրեալ Երուսաղէմացի Թորոսեան Յարութիւն էֆ. տեղւոյս Աւստրիական նամակատան տնօրէնն է և նոյն հիւպատոսութեան թարգմանն ու փոխհիւպատոսը: Թորոսեան էֆ. մօտ 40 տարւոյ բաւականին ուսեալ և պատուաւոր դիրքով անձնաւորութիւն մ'է: — Թեմին կողմանէ երկրորդ աշխարհական պատգամաւոր ընտրուած է ի Յուպէ բնակող Սողոմոն էֆ. Մուրատեան, որ Խապայեան Սրբազանի պիտի ընկերանայ, եթէ Թորոսեան էֆ. չկարողանայ երթալ որ և է պատճառաւ: Մուրատեան էֆէնտի ուսեալ, ծանրաբարոյ և 38—40 տարւոյ մօտ անձնաւորութիւն մ'է պատուաւոր դիրքով, և Յուպէի գերմանական հայազգի հիւպատոս Պ. Սիմէօնի եղբորորդին է: Վերջին պահուն Գեր. Սահակ եպիս. և Թորոսեան էֆ. որոշած են աւագ շաբթուն մեկնիլ ի մայրաքաղաքը»:

— Ամեն. Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան անցեալ տարի Մեծ-Պահոց ժամանակ Գատը-գիւղի Ս. Թագաւոր եկեղեցւոյն մէջ բացատրած էր Տէրունական Աղօթքն և Տասնաբանեայ պատուիրանքը: Այս Մեծ-Պահոց մէջ՝ կիւրակէ առաւօտները ըսկըսած է հետզհետէ ամենապարզ և գըրաւիշ ոճով բացատրել Աւետարանի ինն երանութիւններն: Շաբաթ առաւօտ-

ներն ևս կանանց համար քարոզներ կը խօսի, բացատրելով բուն աստուածպաշտութիւնն, ճշմարտասիրութիւնն, Լուսաւորչայ տօնին առթիւ՝ հալածանաց արհաւիրանքն եկեղեցւոյն յաղթական ելքն, Ս. Հաղորդութեան Խորհուրդն, և այլն:

Մայրաքաղաքիս հեռուոր արուարձաններէն և մօտակայ թաղերէն երկսեռ բազմութիւն մը կիւրակէ և շաբաթ առաւօտները գունդագունդ կը դիմէ ի Գատը-գիւղ, լսելու համար Նորին Սրբազնութեան խանդավառ և հոգեվառ աւետարանաչունչ քարոզներն:

Կ'արժէր որ Մուրատեանց Սրբազանի իմաստալից սքանչելի քարոզներն ի գիր աւնուելով, ի մի հատոր ամփոփուած տպագրուէին, թէ՛ ծառայելու համար իբրև քարոզագիրք և թէ՛ ամբողջ ազգին մտաչելի ընելու համար սոյն եզակի քարոզներ:

— Եղեկոյ Առաջնորդ Գեր. Տ. Խորէն եպիս. Մխիթարեան անձամբ յէջմիածին չկրնալով երթալ, ընտրելի Կաթողիկոսին համար իւր քուէն առանձին նամակի մը մէջ ներփակել և զրկել է առ Ս. Պատրիարք Հայրն, որպէս զի ուրիշ պաշտօնական նամակաց հետ յէջմիածին զրկէ:

— Կարնոյ վիճակին կողմանէ աշխարհական պատգամաւոր ընտրուել է տեղւոյն Գաղ. Ժողովոյ ատենապետ Մեծ. Կարապետ էֆ. Տէր Ազարեան: Իբրև եկեղեցական պատգամաւոր ի Ս. Էջմիածին պիտի ուղեւորի Պատրիարքական Փոխանորդ Գեր. Տ. Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան: Երկուքն ալ իրենց քսակէն պիտի հոգան ճանապարհի ծախքը՝ ազգային արկղին վրայ բեռ չլինելու համար:

— Պրուսայի վիճակին կողմանէ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար աշխարհական պատգամաւոր ընտրուել է Կիւմիւշկէրտան Տիգրան էֆէնտի:

— Կեսարիայէն ճամբայ ելել են Ա-

ռաջնորդ Գեր. Տրդատ Մ. վարդապետ Պալեան և վիճակին գաւառային Ընդհանուր Ժողովոյ Ատենապետ Մեծ. Համբարձում էֆ. Մոստիշեան, Էջմիածին երթալու և Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար:

— Կովկասի Շամախու թեմէն Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար պատգամաւոր ընտրուել է Պ. Լալայեան:

— Արեւելեան Մամլոյ փետր. ամսաթուոյն մէջ կը կարդամք թէ, տեղւոյն Գաւառ. Ժողովոյ կողմանէ՝ Ամենայն Հայոց Հայրապետին ընտրութեան մասնակցելու համար՝ ըստ իւր խնդրանաց՝ թեմական պատգամաւոր կարգեալ Բաբայեան Գարեգին էֆէնտի ընտրութեան զէմ ժողովրդային հանրագրութիւն մը կ'ստորագրուի:

— Նոյն Ամագրոյն մէջ կը կարդամք. «Վիճակագրութիւն մը ուսուրազրի մը մէջ կ'ըսէ թէ, Հայք 1272 եկեղեցի, 3 մատուռ, 1494 քահանայ, 17 սարկաւագ և 1514 դպիր ունին, և թէ անցեալ տարւոյ չըջանին զանազան դաւանութիւններէ ի ուսադաւանութիւն յարող 15160 անձանց մէջ միայն եօթը Հայ կը գտնուին եղեր:

— Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար Եւզոկիայէն աշխարհական պատգամաւոր ընտրուել է Յովհաննէս էֆէնտի Գալբաքեան:

— Ռուսաստանի Աստրախան քաղաքի մէջ մարտի 8ին ժողով գումարուելով, թեմական պատգամաւոր ընտրուել է, «Նուր-Դարի ցանկութեան և բռնած ընթացքի համեմատ» Պ. Յովհաննէս Սարգսեան, և նորա փոխանորդ՝ Պ. Մարտիրոս Գաստինցեան: Պ. Յ. Սարգսեան արդէն երկու անգամ իբրև թեմական պատգամաւոր մասնակցել է կաթողիկոսական ընտրութեանց:

— Էջմիածնայ Գէորգեան ձեմարանի տեսչութեան պաշտօնը ստանձնել է Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոս, Տէր-Գասպարեան Սարգիս եպիսկոպոս:

տեղ որ ինքզինքը նուիրած է այժմ Սի-  
նոզի արձանագրութիւնները կարգի  
դնելու գործին :

— Երեւան հասեր են եօթն Անգ-  
ղիացիք որք մտադիր են այս գարնան  
Արարատի գլուխը բարձրանալ . այնու-  
հետեւ պիտի ուղևորին ի Պարսկաստան :

— Էջմիածնայ Գէորգեան ձեմարա-  
նի ուսուցիչներէն Պ . Կ . Կոստանեան ,  
որ հին աշակերտներէն յարգուած ու-  
սուցիչներէն մին է եղեր և որու տեղ  
ուրիշը գծուար պիտի կրնայ բռնել  
կ'ըսէ նոր-Պարս , հրաժարեր է իւր պաշ-  
տօնէն : Սինոզը ընդուներ է զայս հրա-  
ժարական :

— Կովկասի զանազան քաղաքներէն  
հետզհետէ հեռագրեր կը տեղան ի Թիֆ-  
լիս նոր-Պարսի Խմբագրատունը՝ շնորհա-  
ւորող մարտ 8ի թեմական պատգամա-  
ւորի յաջող ընտրութիւնը :

— Ի Պանտրմա , Արժ . Տ . Ոսկի Ա-  
ւագ Քահանայի հեռացուցման առթիւ  
Ժողովրդային բազմաստորագիր հան-  
րագրութիւն մը պատրաստուեր է՝ խնդ-  
րող Արժ . Հօր վերադարձը : Հանրագ-  
րութիւնը երկու օրինակ է եղեր , մին  
ուղղեալ առ Պոլսոյ Քաղաքական Ժո-  
ղովն , միւսն՝ առ Պալքէսէրի Քաղ .  
Ժողովն :

— Ի գրչիւրէն Թիֆլիսի լրագրաց կը  
գրեն . «Սուրմալուի մի քանի գիւղերից  
տիրացուների մի ամբողջ լէգէոն , թող-  
նելով արօրն ու գուծանը , եզն ու գո-  
մէշը , վերջերս դիմեցին ներկայ Ս . Սի-  
նօզին իրենց վաղուց սկսած քահանա-  
յութիւնը գլուխ բերելու համար : Դը-  
րանց մէջ էին և Արիստակէս Սրբազանի  
բարեկամները որոց յոյսը շատ մեծ էր :  
Ամէնքը անխտիր դուրս վճռուեցան Ս .  
Էջմիածնի գաւթից , և առաջին հալած-  
ուողները Ս . Արիստակէսի բարեկամ-  
ներն էին : Այս վճռական քայլը Ս . Սի-  
նօզի կողմէն հիացուց տեղիս հասարա-  
կութիւնը : Սուրմալուի մէջ առանց այն  
էլ այնքան մեծ է տգէտ քահանայների  
թիւը , որ բոլորովին աւելորդ է նորե-  
րին , և այն էլ այդպիսիներին , ձեռ-  
նադրելը :

— Սամաթիոյ Թաղ . Խորհուրդը  
զադրելով պաշտօնէ , Պատրիարքարանի  
կողմանէ առժամանակեայ Թաղ . Խոր-  
հուրդ մը կարգուեցաւ , որոյ անդամք  
են Տեառք Գէորգ Յովհաննէսեան , Թո-  
րոս Մկրտիչեան , Կարապետ Մկրտիչ-  
եան , Ղազարոս Միքայէլեան , Մանուկ  
Վարդանեան , Մկրտիչ Ալլըճեան , Յո-  
վակիմ Մելքոնեան և Յովսէփ Սըրմա-  
քէչեան :

— Թիֆլիսի լրագրաց մէջ կը կարգամք .  
«Պ . Ղուկասեան լինելով անզուակ ,  
իւր կնոջ համար թողնում է Աւեսիփ շո-  
գենաւի ընկերութեան կէս մասը , որն

արժէ՝ 120.000 ռուբլի , կանխիկ դրամ՝  
15.000 ռուբլի , Հաղարեան ձեմարա-  
նում երկու թողակաւոր պահելու հա-  
մար՝ 15.000 ռ , Շուշու հոգեւոր դըպ-  
րոցին՝ 5.000 ռ , նոյն քաղաքի օրիոր-  
դաց դպրոցին՝ 5.000 ռ , Բագում մի  
նոր եկեղեցի կառուցանելու՝ 30.000 ռ ,  
Ղուբայի գաւառում Քիլվար գիւղի հա-  
յոց ուսումնարանին՝ 1.000 ռ , Բագուի  
Մարդասիրական ընկերութեան օգտին՝  
20.000 ռ , իւր երկու քոյրերէն՝ ամէն  
մէկին 4.000 ռ : Բայց ամենանշաւոր  
գումարը , այն է՝ 150.000 ռ , Պ . Ղու-  
կասեան կարգադրել է այսպէս . այդ  
գումարը , որ մտցրած է «Արաֆելեան  
և ընկերութիւն» կոչված նաւթային  
մեծ ընկերութեան մէջ , պէտք է մնայ  
անձեռնմխելի , մինչեւ նորա գումարը  
կը հասնի 400.000 ռուբլի քանակու-  
թեան , այնուհետեւ այդ գումարի ան-  
միջական կարգադրութեան իրաւունքը  
թողած է կոտակատարներին՝ միայն  
այն պայմանով , որ այդ գումարով բաց-  
ուի մի մեծ դպրոց :»

— Եղեսիայէն «Արեւելք»-ի կը գրեն .  
«Կայսերական կառավարութեան ծա-  
նօթ հրամանին համեմատ , հանրային  
զանազան հաստատութեանց (եկեղեցի ,  
վարժարան , և այլն) արտօնեալ կամ ոչ-  
արտօնեալ լինելն ստուգելու նպատա-  
կաւ բացուած քննութեան պահուն՝  
Կարմուշ գիւղի եկեղեցւոյ հրովարտա-  
կին բացակայութեան պատճառաւ՝ ան-  
հրաժեշտ եղած արտօնութիւնը ձեռք  
բերելու համար , տեղական կառավարու-  
թիւնը եռամսեայ ժամանակամիջոցի մը  
թոյլտուութիւն ըրաւ Կարմուշի ազ-  
գայնոց , որք՝ ինչպէս կ'իմանամք Ա-  
ռաջնորդական յանձնարարութեամբ  
Ազգ . Պատրիարքարանի կը դիմեն այս  
օրերս , Կայսերական կառավարութեան  
հարկ եղած արտօնութիւնն ստանալու  
համար :»

— Տնտեսական Խորհուրդը շաբթուս  
զբաղեցաւ Պոլսոյ Եկնիգիւղի , Թօփգա-  
բուի , Իւսկիւտարի Ս . Խաչ և Գում-  
գաբուի դրսի եկեղեցեաց , Մայր եկե-  
ղեցւոյ և Տիվրիկու կառուածոց մատա-  
կարարութեան վերաբերեալ հաշուա-  
կան , կտակային ու վագֆի խնդիրնե-  
րով , ինչպէս և Իսքէնտէրունի ու Նալ-  
լու Խանի եկեղեցեաց վերաշինութեան  
խնդրով :

— Գեր . Եղիշէ Ծ . վարդապ . Դուր-  
եան Չատկական տօներուն առթիւ Պէ-  
շիկթաշի եկեղեցին պիտի մնայ իբրեւ  
առժամանակեայ քարոզիչ :

— Տնտես . և Ուսումն . Խորհուրդք  
կը խորհրդակցին ապահովագրելու հա-  
մար Ղալաթիոյ Ազգ . Մատենադարանի  
մատեաններն ու հնութիւններն , որոց  
մէ մի քանի կտոր պահեր են վերջերս :

— Թիֆլիսի թերթերը կը ծանու-  
ցանեն թէ Վրաստանի և Իմէրէթի թե-  
մին Առաջնորդ Գեր . Մամբրէ եպիսկո-  
պոս Սանասարեան Չատկական տօներէն  
անմիջապէս յետոյ Ս . Էջմիածին պիտի  
ուղևորի :

— Պրուսայի Առաջնորդ Գեր . Տ .  
Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկո-  
պոս շաբթուս այցելեց Ս . Պատրիարք  
Հօր :

— Չմիւռնիոյ Առաջնորդ Գեր . Տ .  
Ներսէս Ծ . վարդապետ Ասլանեան եր-  
կուշաբթի օր մայրաքաղաքս եկաւ :

— Արժ . Տ . Ոսկի Աւագ քահանայ  
Յանեան երեքշաբթի օր ուղևորեցաւ  
ի Պրուսա , ուր ժամանակ մը պիտի մնայ  
հոգեւոր պաշտօնով :

— Բաղէշի Պատր . Փոխանորդ Գեր .  
Մաղաքիա Ծ . վարդապետ Տէրունեան  
մայրաքաղաքս ժամանեց և առժամա-  
նակեայ քարոզիչ կարգուեցաւ Բումէ-  
լի-Հիսար եկեղեցւոյն :

— Քաղ . Ժողովը հրաժարեցուցած  
է Պոլսոյ Թօփգաբուի վարժարանաց Հո-  
գաբարձութիւնը , տեղւոյն Քարոզչին  
դէմ անվայել ընթացք մ'ունենալուն  
համար :

— Նիկիմիդիոյ ազգայիններէն Մեծ .  
Մանուկ էֆ . Նահապետեան՝ քաղաքին  
Ս . Աստուածածին եկեղեցւոյն բեմն  
ամբողջապէս ծածկելու բաւական եւ-  
րօպական գորգ մը նուիրեր է :

— Վաղը , Ծաղկազարդ , Գեր . Ա-  
րիստակէս Ծ . վրդապ . Վանքեան հրա-  
ւերեալ է Ս . Պատարագ մատուցանել  
Գուզկունձուքի Ս . Լուսաւորիչ եկեղեց-  
ւոյն մէջ , ուր՝ երեկոյեան՝ պիտի կա-  
տարէ Պրուսայի Առաջնորդ Գեր . Տ .  
Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկո-  
պոս Դուռընբացէքի արարողութիւնը :

— Ռոտոսթոյէն՝ Կաթողիկոսական  
ընտրութեան մասնակցելու համար  
պատգամաւոր ընտրուեր է Մեծ . Տօքթ  
Յակոբ էֆ . Նէվրուզեան , փոխանակ  
Մեծ . Յակոբ էֆ . Պոյաճեանի որուն  
հրաժարած լինելն անցեալ շաբթու ծա-  
նուցինք :

— Գեր . Տ . Արիստակէս Ծ . վարդ .  
Վանքեան Եկնի-գաբուի եկեղեցւոյն  
առ ժամանակեայ քարոզիչ կարգեցաւ :

— Բումանիայէն մայրաքաղաքս ե-  
կաւ այդ երկրի Հայոց Այցելու Հովիւ  
Գեր . Տ . Գէորգ Վարդ . Երէցեան , որ  
Էջմիածին պիտի ուղևորի՝ կ'ըսուի՝ մաս-  
նակցելու համար Կաթողիկոսական ընտ-  
րութեան :

— Խառնիւղի Աղքատախնամ ընկե-  
րութիւնը՝ Չատկական տօներուն առ-  
թիւ գիւղին աղքատները մխիթարելու  
համար , հանգանակութեան ձեռնար-  
կեր է :

### Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց, Վի-  
նակաւոր Առաջնորդ Թեմին Հայոց  
Աստախանի:

Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց ծը-  
նած է 1844 օգոստոսի 28ին ի Տփլիս  
տոհմական ազնուական ցեղէ: Իւր ըս-  
կզնական ուսումն ստացած է ի Տրփ-  
լիս յայտնի հայկարան կարապետ վար-  
ժապետ Բեյլիսեանցի ուսումնարանի  
մէջ: Իսկ ուսման ընթացքն աւարտած  
է Տփլիսու Կլասիկական գիմնազիոնի  
մէջ: Նորա գիմնազիական ընկերներէն  
չատերը նշանաւոր գործողներ են այ-  
ժըմ, ինչպէս բրոֆէսոր Ներսէս Ներ-  
սիսեանց, բժշկապետ Գրիգոր Տէր-  
Գրիգորեանց, Բժիշկ Միսաք Արամեան,  
և այլն:

Սուրէնեանց ի մանկութենէ առան-  
ձին սէր ունէր հոգեւորականութեան.  
Իւր ութնամեայ հասակէն արդէն Մող-  
նիի ծխական Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ  
Դանիէլի մարգարէութեան գիրքը ճը-  
րագալոյց երեկոյնները քանի մը տարի  
չարունակ կը կարդար և գիրքը կար-  
դալէն յետոյ՝ բեմէն իջնելով, իւր կար-  
մըրագոյն, սպիտակածաղիկ, կերպաս-  
եայ սեպհական ժամառապիկով զարդար-  
ուած՝ կ'երթար նախ եկեղեցւոյ Աւագ-  
Քահանայ Տէր-Ղազարի աջը համբուրե-  
լու և ապա կարապետ վարժապետի և  
իւր հարազատ հօր: Գիմնազիական ուս-  
մունքը վերջացնելով, անմիջապէս դը-  
նաց Ս. Էջմիածին, և խնդրագրով եր-  
ջանկայիչատակ Գէորգ Գ. Կաթողիկո-  
սին դիմելով, յայտնեց իւր վանական  
լինելու փափագը: Նորին Սրբութիւնը  
տեսնելով չնորհալի երիտասարդը, ան-  
միջապէս ընդունեց զնա միաբան Մայր  
Աթոռոյ Ս. Էջմիածնի և հրամայեց կար-  
գել ուսուցիչ: Սուրէնեանց 1868 հոկտ.  
1էն մինչև 1874 վարեց ընդհանուր պատ-  
մութեան և աշխարհագրութեան ու-  
սուցչի պաշտօնը ժառանգաւորաց դըրպ-  
րոցի մէջ. և որպէս զի նիւթականի պա-  
կասութենէ չնեղուէր, իբրև բացառու-  
թիւն միւս միաբաններէն (որովհետև  
սարկաւազները տարեկան կ'ստանային  
15 ռուբլ) Վեհափառը հրամայած էր  
Սինօզի Գանձապահին տարին 200 ռբլ.  
տալ նմա՝ մանր ծախուց համար: 1868  
դեկտ. 14ին Նորին Վեհափառութեան  
հրամանաւ Վեհարանի մէջ զգեցաւ կը-  
րօնաւորի հանդերձ. նոյն օրը ստացաւ  
կիսասարկաւագութիւն և հետևեալ օ-  
րը, այն է՝ դեկտ. 15ին, Ս. Գայիանէ  
վանքի մէջ աւագ սարկաւագ ձեռնա-  
դրուեցաւ Վեհափառ Կաթողիկոսի  
գաւազանակիր Սանտալճեան Ստեփան-  
նոս Եպիսկոպոսէն: 1871 ապրիլի 15ին

նոյն վանուց մէջ արեղայ ձեռնադրուե-  
ցաւ Վեհապետեանց Պետրոս Արքեպիս-  
կոպոսէն, և որովհետև արեղայներ տա-  
րեկան ուժիկ կ'ստանային 75 ռբլ. Գէ-  
որգ արեղան կամովին հրաժարեցաւ  
տարեկան 200 ռբլ. ստանալէ և գրա-  
ւոր յայտնեց Նորին Վեհափառութեան,  
որ ինքը՝ իբրև միաբան՝ չուզէր բացա-  
ռութիւն կազմել և իւր հոգևոր եղբարց  
նախանձը շարժել, և նոյն ուսուցչա-  
կան պաշտօնը շարունակեց ձրիաբար:  
1872 մայիսի 3ին ստացաւ Շողակաթի  
վանքի մէջ, նոյն Պետրոս Արքեպիսկո-  
պոսէն, վարդապետական իշխանու-  
թիւն: Կոնդակաւ Նորին Վեհափառու-  
թեան — 30 յունվար 1870, թիւ 18 —  
նշանակուեցաւ անդամ Տպարանական  
ժողովոյ, եւ այս պաշտօնը վարեց  
մինչև 25 մայիսի 1874: Ամբողջ տը-  
պարանի գրեանց և թղթի մթերա-  
նոցը, ինչպէս եւ տարեկան ծախքը  
Գէորգ վարդապետին էր յանձնուած.  
նա այն աստիճան ինքզինքը նուիրած էր  
իւր գործին, որ երբ՝ ըստ վանական սո-  
վորութեան՝ միաբանք կը ճաչէին ժամը  
12ին, նա շատ անգամ ժամը 3ին կը  
ճաչէր, որովհետև թղթի մթերանոցի  
բանալիները ոչ ոքի չհաւատալով, ինքը  
իւր ներկայութեամբ համբել կուտար  
տպագրութեան հազարաւոր թերթերը,  
որպէս զի անհաւատարիմ ձեռքը չկա-  
րողանայ վնասել Աթոռոյ շահուց: Գէ-  
որգ վարդապետ իւր հաւատարմու-  
թեան համար միշտ յարգելի է եղած  
յաչս հոգևոր իշխանութեան: 1878ին՝  
ըստ սովորութեան՝ նշանակուեցաւ  
Մողնուց Ս. Գէորգ վանքի ուխտի օրն  
արդեանց վերահսկող. երեք աւուրց մէջ  
ժողովելով Էջմիածին բերաւ 700 ռբլի,  
նախորդ տարիներուն կրկնապատիկը:

Հրամանաւ Սինօզի Ս. Էջմիածնի —  
28 մարտ 1872, թիւ 847 — նշանակուե-  
ցաւ Վերատեսուչ ժառանգաւորաց  
դպրոցի Մայր Աթոռոյ. այս պաշտօնը  
ուսուցչական և տպարանական ժողո-  
վոյ անդամակցութեան հետ կատարեց  
մինչև 28 սեպտ. 1874, այսինքն մինչև  
բացումն Գէորգեան ձեռնարանի Մայր  
Աթոռոյ. Գէորգ վարդապետ խիստ ու-  
շադրութիւն դարձուցած էր ինչպէս  
ուսման, նոյնպէս և մաքրութեան վե-  
րայ: Իւր օրով ուսուցչութեան հրա-  
ուիրուեցան Հայր Եղիա, Հայր Վահան  
և Պ. Արշակ Տէր-Յովսէփեանց: Իւր  
միջնորդութեամբ հասակաւորաշակերտ-  
ները արժանացան՝ Նորին Վեհափա-  
ռութեան հրամանաւ՝ չորրորդ աստի-  
ճանի դպրութեան և այժմ արժանաւոր  
վարդապետներ են՝ Հմայեակ Տ. Սար-  
գըսեանց, Յուսիկ Մովսիսեանց, Գարե-  
գին Սաթուրեանց և Ղևոնդ Յովակիմ-  
եանց. իսկ ընդունակ և յառաջադէմ

փոքր աշակերտները միշտ կը քաջալե-  
րէր հայրաբար. ասոնցմէ այժմ երկուքն,  
Եփրեմ Սուքիասեան և Սահակ Ամա-  
տունի, ընդունակ վարդապետներ են:  
Հրամանաւ Սինօզի, 1874 մայիսի 25ին  
Գէորգ վարդապետ զնաց Բեսարաբիա,  
նորոգ բացուելի ձեռնարանի համար ա-  
շակերտներ ընտրելու: Նորին Վեհափա-  
ռութեան հրամանաւ 1874 սեպտ. 28  
ին նորաբաց ձեռնարանի մէջ նշանակ-  
ուեցաւ ուսուցիչ ընդհանուր պատմու-  
թեան և աշխարհագրութեան, և այս  
պաշտօնը վարեց մինչև 1875 հոկտ. 4,  
նոյն ամսոյ մէջ հրամանաւ Սինօզի (թիւ  
հրամանագրի 2495) կարգուեցաւ Փո-  
խանորդ թեմին Ղարաբաղու և Տեսուչ  
Թեմական դպրանոցի տեղւոյն:

Թիպէտ ձեռնարանի տեսուչ Սրբազան  
Գարբիէլ Արքեպիսկոպոս Այվազեանց  
դժուարացաւ ձեռնարանէն արձակել  
զԳէորգ վարդապետ, որովհետև մեծ  
վատահուժիւն ունէր նորա վրայ և կը  
յարգէր իբրև անկեղծ բարեկամ, բայց  
և այնպէս Գէորգ վարդապետի անձնա-  
կան հիւանդութիւնը և նորա ջերմ  
ցանկութիւնը ժամանակ մը Էջմիածնէն  
հեռանալու համար, ստիպեցին Նորին  
Բարձր Սրբազնութիւնը զիջանելու նո-  
րա խնդրանաց: Ի Ղարաբաղ նորա կար-  
ձատեւ պաշտօնավարութեան նշանաւոր  
գործերն են, նախ՝ Շուշիի մէջ հոգե-  
ւոր օրիորդական դպրոց բանալը, տես-  
նելով արժանայիչատակ տիկին Մարիամ  
(Մայիօ խանում) Հախումեանցի բացած  
և շատ տարիներ փայլայած դպրոցը  
փակուած, և կամենալով որ շարունակ-  
ուի ուսումնասէր տիկինը բարի գործը.  
դպրոցի բացումը փոքրիկ միջոցներով  
եղաւ, բայց այնուհետև հետզհետէ ա-  
ւելի ընդարձակուեցաւ: Նոյնպէս զնա-  
լով Լանքարան քաղաքը (Ղարաբաղի  
թեմ), ուր 18 տարի վեղարաւոր չէր  
այցելած, այնտեղի շատ տարի արաջ  
չինուած եկեղեցին օծեց և բացու օ-  
րիորդական դպրոց ի մխիթարութիւն  
բարեպաշտ և ուսումնասիրաւ ժողո-  
վրդեան, և ո՛չ թէ միայն Հայք օգնե-  
ցին դրամական նպաստով, այլ մինչև  
անգամ Թուսազգի նշանաւոր պաշտօ-  
նատարներ և Թուրք պէյեր: Եկեղեցա-  
կան և դպրոցական հանդէսները Լան-  
քարանի մէջ այնպիսի խոր տպաւորու-  
թիւն գործեցին 18 տարի անտէրուել  
և անմխիթար մնացած հօսին վերայ,  
որ ժողովուրդն արտասուքով արտայայ-  
տեց իւր հոգեկան մխիթարութիւնը,  
մանաւանդ որ այդ հանդէսներ տեղի  
ունեցան Մեծի պահոց վերջին աւագ շա-  
բաթը:

Հրամանաւ Սինօզի — 1877 յունվ.  
31, թիւ 122 — Գէորգ վարդապետ կար-  
գուեցաւ Վերին Ագուլեանց Ս. Թով-

մայ առաքելոյ վանուց վանահայր և տեսուչ և ուսուցիչ երկսեռ հոգեւոր դպրոցաց . այս կրկին պաշտօնները վարեց մինչև 1878 Հոկտ . 12 և իրեն համար շատ տաժանելի եղաւ , վասն զի առաւօտ և երեկոյ՝ իրեւ վանահայր՝ անխափան պէտք է կատարէր ժամերգութիւնը , և դպրոցները իրարմէ մէկ մըոն հեռաւորութիւն ունենալով , մանաւանդ ձմեռ ժամանակ Ագուլեաց զառիվայր , անհարթ և սառուցով պատած ճանապարհները մեծ նեղութիւն կը պատճառէին տեսուչ և ուսուցիչ վարդապետին , բայց նա անտրտունջ կը կրէր ճակատագրէն իւր վերայ դրուած այդ ժամանակաւոր , տաժանելի աշխատանքը : Գէորգ վարդապետի տեսչութեան ժամանակ մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին դպրոցները , որովհետեւ իրեն գործակից ըրաւ կարող ուսուցիչներ . Տիխոնիս հրաւիրեց արժանայիշատակ Յակովբ Մելիք-Յակովբեանցը , Օտեսայի Համալսարանէն կարապետ Էտիլիանեանցը , և տեղական ուսուցիչներէն նոյնպէս ընտրեց արժանաւորները , որոնք էին՝ Հայր Մեսրոպ , Պ . Միանասրեանց , Պ . Գաւիթ Բալանթարեանց , և լին , և այսպիսով մի կանոնաւոր խումբ կազմելով , գործը ցանկալի կերպով յառաջ տարաւ : Նոյնպէս վանքը և շրջապատող շէնքերը հիմնովին վերանորոգուեցան , թէպէտ վանական հոգարարձութեան ձեռքով , բայց նորա խորհրդով : մինչև այն ժամանակ հոգարարձութեան անսահման իրաւունք վայելելով , նախկին վանահայրեր երբէք չէին միջամտեր նոցա գործոց . բայց Հոգարարձութեան յարգելով Գէորգ վարդապետը , միշտ իրենք կը դիմէին նորա խորհուրդն առնելու և նորա ամէն առաջարկութիւններն անմիջապէս կը կատարէին : Գէորգ վարդապետի բնակարանը , ինչպէս Ագուլեցիք կը վկայեն , չէ՛ր նմաներ վարդապետական խցի , այլ ուսանողական սենեկի . նորա գրասեղանը լի էր ամէն տեսակ նոր հրատարակութիւններով և լրագիրներով : Թէ՛ ուրախութեան և թէ՛ սրտմութեան ժամանակ աշխարհատես Ագուլեցեաց համար ցանկալի և մեծ մխիթարութիւն էր ներկայութիւնը Գէորգ վարդապետի զոր կը յարգէին ի սրտէ :

Գէորգ վարդապետի Ագուլիսէն Փոխանորդական պաշտօնով Աղէքսանդրապոլ տեղափոխուելով մի առանձին տեսարան ներկայացուց . ամբողջ Ագուլիսը սոքի վրայ էր . Ս . Թովմայ առաքելոց վանքի ընդարձակ սրահը լի էր ժողովրդով , առաջին իշխանէն սկսեալ մինչև վերջին այգեպանը , որոնք իբր չորս մղոն տեղ ոտքով ճանապարհ ձգեցին մինչև ներքին Ագուլեաց այգիները , ուր կառքը

նստելով , սլացաւ դէպ ի Օրդուպատ , ուր տեղական կառավարիչը շքեղ ճաշ պատրաստած էր նորա համար : Աղէքսանդրապոլի վիճակին Փոխանորդի պաշտօնը Սինոզի հրամանաւ ստանձնեց 1878 հոկտ . 12ին (Թիւ հրամանագրի 2394) , և որովհետև քաղաքը բաժանուած էր երկու կուսակցութեան , Վեհ . Կաթուղիկոսի պատուէրը ի նկատ ունենալով , ամէն կերպով աշխատեցաւ կուսակցութիւնները հաշտեցնել , և ըստ բաւականին յաջողելով , երբ վիճակային գործերով 1879ին էջմիածին գնաց և Վեհ . Գէորգ Կաթուղիկոսին ներկայացաւ , Նորին Սրբութիւնը յայտնեց Գէորգ վարդապետին իւր Հայրապետական գոհունակութիւնը և անուանեց զնա « հրեշտակ խաղաղութեան » : Գէորգ վարդապետի անխոնջ աշխատութեամբ Ս . Փրկիչ եկեղեցեոյ բակի մէջ կառուցուեցաւ հոյակապ դպրոցական շէնքը . նա հիմնարկեց քաղաքի Ս . Աստուածամոր աւագ եկեղեցին , որ նոյնպէս մի հրաշալի ճարտարապետական զարդ է , ո՛չ թէ միայն Աղէքսանդրապոլեոյ համար , այլ ամբողջ Հայութեան համար : Նոյնպիս հիմնարկեց երկրորդ անուանեալ Ս . Աստուածամոր եկեղեցին : Երկու եկեղեցիներն ալ այնպիսի խորխուղ դրութեան մէջ էին , որ եթէ մի տարի էլ մնային , կրնային յանկարծ քանդուիլ և շատ մարդիկ զոհ տանիլ : Բնակելու ժամանակ թերահաւատք ահանատես եղան ասոր : Նաև Փրկիչ եկեղեցեոյ շրջապատ նորակառուց կըրպակները , որ վարձու էին տրուած չընչին գնով , մեծ աշխատութեամբ և շատ թշնամիներ վաստակելով , կարողացաւ վարձագները կրկնապատկել տալ : Թէպէտ ծածուկ համակրողներ շատ կային , բայց այդ օգտաւէտ այլ կնճռոտ գործի մէջ անկեղծ և փակ սրտակից պաշտպան համակրողն էր բժշկապետ Աւետիք Բարայեանցը , արժանայիշատակ և մեծ հիւրասէր՝ Մահտեսի Միրտիչ աղայի արժանաւոր ժառանգը : Ասոնցմէ ի վատ , Աղէքսանդրապոլի վիճակի մէջ բաւական եկեղեցիներ հիմնարկեց և մի քանի դիւղերու մէջ ալ դպրոցներ բացաւ : Գէորգ վարդապետ սիրելի էր առաւել գիւղական ժողովրդեան իւր դիւրամատչելի , բարեբարոյ և անշահասէր բնաւորութեան համար . ի ժամու ի տարաժամու , որպէս և ամենայն տեղ , նորա դուները բաց եղած են ժողովրդեան համար , երկրորդ Աստուածամոր եկեղեցեոյ մօտ ևս բաւական հող ձեռք բերելով՝ դպրոցի շինութեան հիմն ձգեց . այս հող արքունական ամրոցի դիմացն էր թէև , բայց բերդապահ Գեներալը և երկրաշափնեբու գլխաւորը չաանաւոր զինուորութեամբ վարուեցան՝

իրենց վարդապետին նկատմամբ ունեցած համակրութեան շնորհիւ , մինչև անգամ թոյլ տուին որ դպրոցական և եկեղեցական շինութեանց քարը ամրոցի մօտէն տանին , իբրև առանձին բացառութիւն , որ խիստ քիչ անգամ կը պատահի :

1881 յունիսի 1ին , Սինոզի հրամանաւ (Թիւ հրամանագրի 1500) կարգը ուեցաւ Փոխանորդ Թեմակալի Հայոց Երևանայ . (Արարատեան աշխարհի) : 1882 Մայիսի 9ին՝ Երջանկայիշատակ Գէորգ Գ . Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի ձեռնադրութեամբ՝ Հայաստանեայց Առաքելական Ս . էջմիածնայ Կաթուղիկէ Մայր Եկեղեցեոյ մէջ ամբարձաւ յատուցան Եպիսկոպոսութեան : Գէորգ Եպիսկոպոս Սուրենեանց հիմնաւոր կերպով նորոգել տուաւ քաղաքի բոլոր եկեղեցիներն որք անչքացած էին , նորոգել տուաւ նաև Առաջնորդարանը և Կոնսիստորիայն : Երևան քաղաքի կեդրոնի մէջ 1868ին հիմնարկուած Ս . Գրիգոր Լուսաւորիչ հոյակապ եկեղեցեոյ պատերը 1870ին մէկ ու կէս կանգուն գետնէն բարձրացնելով կիսաշէն թողած էին , եկեղեցեոյ բակն ալ անպարկապ լինելով , օծեալ հիմնարկութիւնը պարսիկներու սղբանոց դարձած էր : 1882ին Գէորգ Սրբազան տեսնելով օծեալ սրբատեղին արհամարհեալ , ժողով կազմեց առաջնորդարանի մէջ և յայտնեց , որ ունի երկու առաջարկութիւն . կա՛մ այն սրբատեղին հիմնովին քանդեն , որպէս զի Հայք ծաղր ու ծանակ չլինին օտար քրիստոնէից առաջ և կա՛մ շինութիւնը շարունակել ի փառս Աստուծոյ և ի հոգեկան մխիթարութիւն բարեպաշտ ժողովրդեան . յարեց թէ , որչափ կը տեսնէ , Երևանցեոց մէջ ազգասիրական և կրօնասիրութեան ըզգացմունքը դեռ ևս կենդանի է , վասն որոյ , ըսաւ , ընտրեցէ՛ք շինութեան նոր վերակացուներ և շարունակեցէ՛ք գործը : Սրբազան Հօր ազգու յորդորը ներգործելով ունկնդրաց վրայ , անմիջապէս նոր վերակացուներ ընտրեցին պատուական և անձնուէր մարդիկ , որք Նորին Սրբազնութեան ստանալով պաշտօնավարութեան հրամանագիր և ժապաւինեալ տուեալ , բաւական գումար հաւաքեցին . առաջին տարին ընդարձակ սրահը շրջապատեցին քարեայ ամուր պարսպով և հետեւեալ տարին անընդհատ շարունակեցին եկեղեցեոյ շինութիւնը , Սուրենեանց Սրբազանի ներկայութեամբ , ի պարձանս Երևանցեոց : Թեմական դպրանոցն , որ կը բաղկանար երեք դասարանէ , Հոգարարձութեան օգնութեամբ բարձրացուց մինչև հինգերորդ դասարանի . վեցերորդ դասարան բացման որոշումն ևս ստորագրեց

1887ին և այն օրերը մեկնեցաւ իւր նոր պաշտօնատեղին Աստրախան :

Այստեղ աւելորդ չեմ համարիր յիշել որ նորա Առաջնորդութեան ժամանակ Երևանայ Թեմական դպրանոցն ունէր արժանաւոր տեսուչներ , որք էին Սարգիս Բեկնազարեանց (այժմ քահանայ) և Աբխաղում Յովհաննիսեանց : Նորա օրով ամէն տեսակ եկեղեցական և դպրոցական նուիրատուութիւնները առատացան . ո՛չ մի հարուստ մեռնողի թաղման հանդիսին չէր նախագահեր , եթէ կանխաւ չտեղեկանար աստուածահաճոյ հաստատութեանց համար որ և է գումար կտակած լինելն : Եւ ինչպէս Երևանայ մէջ , նոյնպէս և ամէն ուրեք այնպիսի մի հեղինակութիւն ունէր Գէորգ Եպիսկոպոս , որ իւր մէն մի խօսքը ընդունելի էր իւր հօտին համար . երբէք նորա առաջարկութիւնները չեն մերժուած . նա միշտ աշխատած է իւր ժողովուրդը խաղաղութեան մէջ և ամէն կուսակցութենէ հեռի պահել : Երբ Ս . Էջմիածնի ձեմարանի համար 1881ին առանձին տպագրեալ տոմսակներով կամաւոր տուրք կը հաւաքէին , Առաջնորդարանի մէջ Գէորգ Եպիսկոպոս Երևանցիներէն մէկ ժամու մէջ 900 բուրլի ժողկեց . վերջն իմացուեցաւ որ միւս թեմերն այս գումարին հազիւ քառորդը զրկեր են Սինօղին : Գէորգ Սրբազանի դէպ ի Թեմական դպրանոցն ունեցած հոգացողութեանց և խնամոց մասին մանրամասն տեղեկութիւն կարելի է քաղել նոյն դպրանոցի տպագրեալ Յիսնամեայ Յորեւանի Պատմութեան մէջ , ուր պարզ կ'երևուի որ ո՛չ մի առաջնորդ ուսումնարանական ասպարիզի մէջ այնքան չէ գործած որչափ նա : Դեռ ևս Սուրէնեանց Գէորգ Եպիսկոպոս Երևան չեկած , մօտ 5 տարի առաջ , Հոգաբարձութեան խնդրանայ համաձայն Սինօղը հրամանագրած էր , որ եկեղեցեաց դերամագլխոց տոկոսները յատկացուին Թեմական Դպրանոցի պահպանութեան , բայց բոլոր եկեղեցեաց ծխականք բացէ ի բաց մերժած էին վերայիշեալ հրամանը . յետ հինգ ամաց , Գէորգ Սրբազան Երևան գալով , չանցաւ տարի մը , և իւր հեղինակութեամբ և անխնջ աշխատութեամբ կարողացաւ համոզել բոլոր Ծխականներն որ եկեղեցեաց դրամագլխոց տոկոսն յատկացնեն Թեմական Դպրանոցի պահպանութեան . այս կերպով , Դպրանոցը մինչև այսօր կը վայելէ մեծագումար եկամուտի ազբիւր : Գէորգ Սրբազանի առաջարկութեամբ իւր վերջին տարին , Յակոբջան ազա Գէորգեանց խոստացաւ Դպրանոցի կից մի մեծ դահլիճ կառուցանել , և չնայելով Գէորգ Եպիսկոպոսի բացակայու-

թեան՝ իւր խոստումը կատարեց (Տես Յորեւանի Պատմութիւն) :

Երբ 1884 թուականին կառավարութեան հրամանաւ Ծխական բոլոր դպրոցները փակուեցան բաց ի Թեմական Դպրանոցէն , Գէորգ Եպիսկոպոս թոյլ չտուաւ որ մէկ աշակերտ զրկուի ուսումէ , այլ ամէնքն ընդունեց Թեմական Դպրանոցը , մինչև անգամ Թեմական Դպրանոցին նախագաւիթը պատով բաժնել տուաւ և առանձին դասարան որոշեց : Գէորգ Սրբազան 1882ին այցելելով իւր Երեւանայ թեմի Տաթևու և Հին Նախիջևանի կողմերը , վիճակային գործերը կարգի դնելէ յետոյ , կարողացաւ նաև ժողովել Էջմիածնայ Աթոռոյն սեպհական 5000 բուրլի անյուստալի ապառիկները : Պէտք է աւելցնել որ նա իւր պաշտօնավարութեան մէջ խիստ կարգապահ է , իրբեւ իշխանաւոր խոստապահան է , բայց և այնպէս ի սրտէ կը յարգէ արժանաւոր և հաւատարիմ ստորադասեալները : Ամբողջ վեց տարի Երևանայ մէջ մնալէ յետոյ , մեծ պատուով ճանապարհ ձգեցին զինքը դէպ ի Աստրախան : Երևանայ ժողովուրդը սրտով կը համակրէր իրեն , շատ ցուեցան նորա տեղափոխութեան համար . մեկնելու օրը ներկայ էին Պ . Նահանգապետն , բոլոր ազգաց հոգեւորականք և մեծ բազմութիւն ժողովրդեան , որ բազմութիւ կառքերով և շատեր ձիաւոր հետեւելով Նորին Սրբազնութեան մինչև քաղաքէն 7 մղոն հեռու Քանաքեռ գիւղ , այն տեղի այգիներէն միոյն մէջ ճոխ ճաշ տուին և շատեր իրենց զգացումները ճառերով արտայայտեցին , ինչպէս Հայր Ղևոնդ Աթնասեանց , տաղանդաւոր վիպագիր Պերճ Պոռեանց , Թեմական Դպրանոցի Տեսուչ Աբխաղում Յովհաննիսեան , և այլն : Եւ ճաշէն յետոյ « է՛ր հեռանաս » երգելով , արտասուքով բաժնուեցան իրենց սիրելի Սուրէնեան Գէորգ Եպիսկոպոսէն : Երևանէն մեկնելէ քանի մը օր առաջ Առաջնորդարանի մէջ խումբ խումբ Նորին Սրբազնութեան ներկայացան Թեմական Դպրանոցի Հոգաբարձուք , Տեսուչը , ուսուցչական խումբը և աշակերտները , թուով մօտ 200 , ինչպէս և կոնսիստորիայի անդամները , ատենադպիրը և դիւանական բոլոր պաշտօնեայներն , և առանձին առանձին ուղերձներ արտասանեցին իրենց պաշտելի Առաջնորդին մեկնման առթիւ . յայտնելով իրենց անհուն սէրն , անկեղծ ցաւն , և թուելով այն անհամար բարիքներն զորս վայելեցին Նորին Սրբազնութեան պաշտօնավարութեան միջոցին : (Վերջը միւս անգամ)


ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԹՇՆԱՍԻՆ

Առ Վ . Գ . Զ .

Յոռետեսութիւնը ժամանակէ մ'ի վեր սկսած է իւր աւերիչ բոյնը դնել մեր երիտասարդութեան մէջ : Հիները , որոց շատ մը պարագայներու մէջ չենք հաւնիր , այդ ախտին ենթակայ չէին . հին ատենուան երիտասարդները իրենց ծաղիկ հասակը ուրախ զուարթ կ'անցունէին . բայց հի՛մայ . . . ապահովապէս մեր երիտասարդութեան , մանաւանդ զարգացեալ մասին , հարկւրին յիսունը ինքզինքը մեղամաղձութեան տուած է . ու՛րկէ եկաւ մեր մէջ մտաւ այս օտար հիւրը :

Ընդունելով հանդերձ մեր տխուր տրամադրութեանց բնական պատճառներն , նիւթական պատճառներ մեծաւ մասամբ , ուրիշ կարեւոր պատճառ մ'ալ ունինք , որ թէպէտ քիչ մը (և եթէ կ'ուզէք՝ շատ մը) ծիծաղելի՛ բայց ոչ նուազ ստոյգ է : Այդ գլխաւոր պատճառը մօտան է . յոռետեսութիւնը հիմայ մօտայի կարգ անցած է (ինչպէս որ ջղային հիւանդութիւն ունենալը կանանց մէջ մօտա է , զի շատ նազիկ հիւանդութիւն մ'է . չէ՞ք դիտած , երբ կին մը սրնը ունիմ , կ'ըստ՝ կարծես օխսը լեզու կիսեմ ըսածի պէս կը շփանայ) : Եւ արդարեւ , մեր արդի գրականութիւնը ծայրէ ի ծայր աչքէ անցուցէք— գերեզման , նոճի , բու , խաւար , գիւղեր , աղբամուղջ , մահ , ի մի բան թերթերու ամբողջ երեսը սև ներկուած , այնպիսի խաւ սեւ մը զոր քիմիական ամենագորեղ բաղադրութիւնը չպիտի կրնար լուծել . կեանքի միայն տխուր կողմերը մասնաւոր խնամով սերտուած և բազում ուրեք չափազանցուած՝ մըթի՛ն , դառնապէս յուսահատական երանգներով կը պատկերեն մեր աչաց : Ինչո՞ւ այս մօտան . . . : Նախ զի , կարծեմ Ֆրանսայի մէջ վերջին ատեններս այնպէս կ'ընեն եղեր . . . : Երկրորդ զի , Շօփէնհաուեր անունով հիւանդ մը կար ժամանակաւ Գերմանիոյ մէջ . . . և ասոնցմէ զատ՝ յոռետես գրականութիւնը գողցես մասնաւոր հրապոյր մ'ուրի իւր մէջ . տխուր գրագէտը իւր վրայ միշտ արգահատալից համակրութիւն մը շարժած է . համակրութիւն՝ զոր ո՛չ ոք պիտի մերժէր՝ անբուժելի հիւանդաց , մանաւանդ երբ անոնք երիտասարդ են : Մեր գրագէտներն ալ ի հարկէ կը սիրեն համակրութիւն շահիլ (ո՞վ չսիրեր) , բայց իրենց ընտրած միջոցը . . . :

Ի՞նչ է գրագէտ մը .— գրագէտն արուեստագէտ մ'է նիւթական և բարոյական , կրկին աշխարհներն իրենց խկատիպ գոյներովը նկատող . բայց ո՛չ



միայն այդչափ: Բնութիւնն իտէալ չու-  
նի, այսինքն արդէն ինքը իտէալ մ'է:  
Գարուս գարգացեալ գիտութիւնը վըճ-  
ուած է թէ տիեզերքի նիւթական կազ-  
մակերպութենէն լաւագոյն և յաջողա-  
գոյն կազմակերպութիւն մը չէ կարե-  
լի երևակայել: Հետեւաբար, գրագէտ  
մը նիւթական աշխարհքը նկարած ա-  
տեն, կատարելագոյն հաւատարիմ պար-  
տի մնալ իրականին: Նոյնը չենք կրնար  
ըսել, սակայն հոգեկան աշխարհին հա-  
մար.— մեր հոգեկան կենցաղը կատար-  
եալ չէ և մենք մեր կենաց ընթացքին  
մէջ միշտ կը ձգտինք կամ պէտք է ձգտ-  
տինք բարձրագոյն իտէալի մը, զոր  
գծած է մեր առջև կրօնքներու սըր-  
բազնագոյնը և ոյր վրայ հիմնեալ է բա-  
րոյական փիլիսոփայութիւնը: Արդ,  
գրագէտ մը ո՛չ միայն մեր հոգեկան  
աշխարհին հաւատարիմ հետազօտիչը  
լինելով շատանալու է, այլ նաև առաջ-  
նորդելու է զմեզ դէպ ի գերագոյն ի-  
տէալն: Բայց ասոր հակառակ, մեր ար-  
դի գրագէտք, մեծաւ մասամբ, ո՛չ  
միայն այդ նուիրական պարտականու-  
թիւնը չեն կատարեր՝ այլ գէթ իրա-  
կան կեանքի հաւատարիմ թարգման-  
ներն ալ չեն հանդիսանար: Դուք որ  
այդ կեանքով կ'ապրիք ամենքդ ալ, ը-  
սէ՛ք ինչդրեմ, ամէն տան մէջ լաց ու  
կո՞ծ միայն կը գտնէք:— Ապահովագէտ  
տխրութեան քօղը վարագուրած է շատ  
մը դժբաղդ յարկեր, բայց ասոր հան-  
դէպ, չկա՞ն ուրիշ յարկեր ալ, ուր  
խաղք և խնձիւք, ուր հոգեկան ամե-  
նազուարթ տրամադրութիւնք անպա-  
կաս լինին. կարճ խօսքով, կեանքը  
խառնուրդ մը չէ՞ ցաւոց և ուրախու-  
թեանց. ինչո՞ւ միայն զայն տեսնել և  
զայս անտեսել. Let us look on both  
sides of the shield — Վանանից երկու  
կողմն ալ դիտեմք— կ'ըսէ մեծաւ իրա-  
ւամբ անգլիական առածը:

Յուսեցեալութիւնը տարափոխիկ հի-  
ւանդութեանց կը նմանի և փոխանցու-  
մը շատ շուտ է, երբ արդելիք միջոց-  
ներ, անթիսէքսիֆներ չգործածենք:  
Չափազանց տգիտութիւնը և առաւել  
ևս առողջ դաստիարակութիւնը բնա-  
կան և զօրաւոր միջոցներ են յուսեցե-  
սութեան ծաւալման դէմ: Բայց թե-  
րուսներն, սղջամիտ իմաստասիրութենէ  
զուրկ արարածներն, ա՛հ այդ խեղճերն  
նախասահմանեալ ենթակայներ են  
գողցես. բաւական է որ քիչ մը ժա-  
մանակ շիտիւն հիւանդներու գրակա-  
կանութեամբ և ահա իրենք ևս ցաւեր  
կ'զգան, որք ի սկզբան թեթեւ, հետըզ-  
հետէ կը ծանրանան, կը ծանրանան,  
մինչև որ զանոնք գերեզմանին դուռը  
առաջնորդեն: Թերուսները միշտ խնա-  
մակալներու պէտք ունին. անոնք եթէ

բնականէն օժտեալ չեն զօրաւոր կամ-  
քով՝ պզտիկ արդելքի մ'առջև կը յու-  
սահատին, իրենց բոլոր քաջութիւնը կը  
կորսնցունեն. բարեացակամ ձեռք մը  
պէտք է որ զիրենք միշտ շիտակ ձամ-  
բուն մէջ առաջնորդէ, և արդարև երբ  
մեր գրագէտներուն պէս խղճամիտ ա-  
ռաջնորդներ ունինք՝ ալ ի՞նչ տեղի կայ  
մտատանջութեան . . .

Գրականութիւնը խիստ զօրաւոր և  
միանգամայն խիստ փափուկ գործի մ'է:  
Վիրաբուժական գործիքի մը նման, իւր  
թեթեւ, գրեթէ աննշմարելի մէկ շար-  
ժումովը կրնայ երբեմն կեանք մը փրո-  
կել, բայց միևնոյն ատեն մէկ հազա-  
րորդամէթր շեղումով մը կրնայ կեանք  
մը կորսնցունել: Գրականութիւնը, որ  
կեանքէ մը կը ծնի և միանգամայն կեան-  
քի մը ծնունդ կուտայ, ամէն ժամա-  
նակ և ամէն տեղ ժողովրդի մտային  
փիճակին սրով և նորա հանրային ու  
անհատական կենցաղին վրայ ունեցեր  
է իւր անհուն ազդեցութիւնը: Արդ,  
երբ գրականութիւն մը կը ձգտի ամե-  
նուրեք գերեզմանի փոսը մատնացոյց  
ընել, երբ ամէն վայրկեան մեռելոց  
գարշահսութիւնը, տարրալուծեալ  
մարմնոց զապիր և թունաւոր կազերը  
կ'արտարուրէ, ի՞նչ կը լինի այն ժողո-  
վրդին վիճակը ոյր վրայ ազդեցութիւն  
ընելու կոչուած է այդ մեռելատիպ գը-  
րականութիւն: Միթէ, երիտասարդու-  
թիւնն, որ այսօր ի մեզ ընթերցող հա-  
սարակութեան մեծամասնութիւնը կը  
կազմէ, երիտասարդութիւնն որ հասա-  
րակութեան մը ծաղիկը, զօրաւոր ջիւղ  
կը հանդիսանայ, երիտասարդութիւնն  
որոյ եռանդէն, գործունէութենէն,  
յոյսերէն և երազներէն կախուած է ազ-  
գի մը ապագայն, ապրելով այդպիսի  
թունաւոր մթնոլորտի մը մէջ՝ կենդա-  
նի դիակ մը, յուսահատներու, ապի-  
կարներու, դեռ կենաց գարնան մէջ  
կեանքէ ձանձրացող ու դառնացող ա-  
պուշներու երամ մը չը՞ դառնար:

Գրականութեան պատմութիւնը ար-  
դարև կը ներկայացնէ մեզ տխուր, յու-  
սեցեալ բանաստեղծներ. բայց անոնք  
իրենց արդարացուցիչ պատճառներն  
ունեցած են. իւրաքանչիւրին կենաց  
վրայ բաւ է ակնարկ մը նետել համո-  
զուելու համար թէ անոնք աշխարհի  
ընկերական կազմակերպութեանց են-  
թադրեալ չարիքներէն դժգոհներ չէին,  
այլ իրենց ֆիզիքական թերի և վա-  
տայժ կազմութեան զոհերն. մեր մէջ  
Դուրեանը, Անգլիացոց մէջ Քից և Նէ-  
լինկ տխուր, շատ տխուր բանաստեղծ-  
ներ էին, որովհետև կը նախազգային  
իրենց կենաց լապտերին մօտալուտ շի-  
ջումը. կեանքէն ձանձրացած չէին նո-  
քա, այլ ընդհակառակը մեզմէ աւելի

կեանքին կը փարէին, սոսկմամբ նշմա-  
րելով անգութ ձեռքն որ վաղ պիտի  
գար խել զիրենք այս տենչալի աշխար-  
հէն: Պայրըն յուսեցեալ մ'էր, որովհե-  
տև կաղ էր. խելճ երիտասարդը իւր  
ամբողջ հանճարը կը ծախէր վայելուչ  
սրունքի մը փոխարէն և երբ ունենար  
զայն, աշխարհի զուարթագոյն գրող-  
ներէն մին կը դառնար ապահովագէտ:  
Սակայն մեր արդի գրողներուն համար  
նոյնը չենք կարող ըսել. անոնց մէջ  
կարծեմ մարմնով հիւանդը հազուագիւտ  
է. անոնք, ինչպէս ըսինք, իրենց մէն  
մի քայլափոխին. մէյմէկ յուսահատե-  
ցուցիչ, ընդարմացուցիչ, ջլատիչ ե-  
րևոյթ կը նշմարեն. անոնք ո՛չ թէ ի-  
րենց սեպհական կեանքը, այլ աշխար-  
հի կեանքը թերի, յուր, տխուր կը  
գտնեն. անոնք մարդկային ընկերական  
կազմակերպութեանց մէջ սխալներ, շե-  
ղումներ կ'ընդհնարեն. անոնց շրթանց  
վրայ կը տիրապետէ դժգոհութեան և  
հեզնութեան ժպիտը:

Մօսա՞ է այս.— Այսպէս վարդապե-  
տեցինք և կը մաղթենք ալ որ այսպէս  
միայն լինի:

Անկեղծ համոզում. — կ'արգահա-  
տինք իրենց վրայ:

Թող մեր գրագէտները չվշտանան  
երբ յայտարարենք թէ իրենցմէ մեծա-  
գոյն մասն իսկագէտ բարձրագոյն գի-  
տութենէ զուրկ մարդիկներ են. երբ  
կը տեսնեն որ գրելու ընդունակութիւն  
ունին՝ մէկէն ամէն բան երեսի վրայ կը  
թողուն յանգերու և պատկերներու ըզ-  
հետ պնդելու համար, և երբ քիչ շատ  
գրագէտի համբաւ մը վայելեն՝ աշխար-  
հի իրերը դատելու, զննելու, ուսում-  
նասիրելու, հասկնալու և բացատրելու  
ծայրայեղ յաւակնութիւններ կ'ունե-  
նան. իրենց այս ընթացքը հեռի է  
ուղիղ լինելէ: Աշխարհս լաւ ըմբռնե-  
լու համար պէտք է գիտնալ մ'լինել:  
Այժմ աշխարհս լաւագոյն ըմբռնած  
եմք քան տասը դար առաջ և ապահո-  
վագէտ ապագայ սերունդը տաս դար  
վերջը մեզմէ լաւագոյն պիտի ըմբռնէ  
զայն. ի՞նչ բանի կը պարտիմք այս բանս.  
Հազուագիւտ, նորելուկ, հանճարեղ  
գրական բացատրութեանց թէ ոչ՝ գի-  
տութեան հսկայաքայլ յառաջդիմու-  
թեան. արդ, գրականութիւն մը, որ  
իւր սահմանէն քիչ մ'ալ անդին անց-  
նելով իմաստասիրական փափուկ հար-  
ցեր շօշափելու կը յաւակնի, ամէն նշա-  
նակութենէ զուրկ է երբ գիտութեամբ  
օժտեալ ու զարգացեալ գրականու-  
թիւն մը չէ. նոյն իսկ պարզ գրական  
նկարագրութեանց, ինչպէս նաև գեղա-  
րուեստի բոլոր ճիւղերուն համար, գի-  
տութիւնն կարի հարկաւոր պայման մ'է:  
Գիտութիւնը կ'ապացուցանէ համոզիչ

եղանակաւ թէ տիեզերքի գործարանաւորք և անգործարանք, միսն ու հոգին, ամէն Ֆիզիքական և մտաւորական երևոյթք, կեանքի ամէնօրեայ պատահարք, ձախողութիւնք և յաջողութիւնք, ամէնքն ալ ունին իրենց բնական պատճառներն. պատճառներ՝ որոցմէ զգուշանալ կամ անոնց անձնատուր լինել մեծաւ մասամբ մեզմէ կախումն ունի:

Տխեղծ, ապուշ տղեկ մը, լերկ ամայի անապատ մը, ցնցոտիներու մէջ փաթթուած մուրացիկ մը, իւր ճոխութիւններէն մերկացած սնանկ մը, մուրթեանց ճանկին մէջ չարչարուող աստաւոր մը, անհետացեալ սերնդեան մը հեռաւոր յիշատակը, վերջապէս այն այլազան ու բազմազան երևոյթներն մէկ մէկ զորաւոր առիթներ են մեր գրագիտաց համար իրենց տխուր քնարը հնչեցնելու, երեմիական ողբեր արձակելու, բնութեան, գերագոյն էակին դէմ դանդաղելու, բողբոջելու, սպառնալու և վերջ ի վերջոյ քնարը ոտից տակ վշրելով բացագանչելու. «Այս է կեանքը» . . . :

Գիտունը այդպէս չընեք. նա չբաւականանար երևոյթներով, մակերևոյթներով, արտաքին հարեանցի նշաններով. նա իրաց և դիպաց մինչև խորը, մինչև արմատը կը քննէ. մակածութիւնը իւր կատարելութեան աստիճանին կը հասցնէ. իւր գործիքներն երկու պըզտիկ բառեր են—ի՞նչ և ի՞նչու—: Առաջնոյն միջոցաւ աստը կը գուշակէ, երկրորդին շնորհիւ աստը կը բուժէ. աստը կը գուշակէ, ո՛չ որպէս մեր գրագէտներն, թերի, խեղաթիւրեալ, չափազանցեալ եղանակաւ, ա՛յլ իւր խակական, բնական, պարզուկ վիճակին մէջ, իւր բոլոր բազմակողմանի մանրամասնութիւններովը գերազանցապէս պայծառացեալ. աստը կը բուժէ թուելով պատճառներն որք ծնունդ տուած էին անոր, միջոցներ ցոյց տալով անկէ չվարակուելու և ո՛չ թէ երևոյթի մը ստուերէն սարսափահար, ինչպէս մեր գրագէտներն. . . . Գիտունն մը իրաւամբ շատ տխուր դաղափար պիտի կազմէր մեր արդի յոռետեսներու մտաւոր կարողութեանց վրայ, որք իրենց բացասական գործունէութեամբ բնագանցօրէն յառաջդիմելու բացարձակ ասլիկարութիւն ցոյց կուտան:

Գուցէ աստ առարկեն մեզ թէ ա՛յլ է գիտնաց դերը, ա՛յլ է գրագիտացը: Գիտունը, սակայն, ի՞նչ կերպով կ'ըմբռնէք. բնական օրէնքներով և գործիքներու հեղինակութեամբ զբաղող անհատ մը միայն. ո՛չ ապաքէն մարդկային կեանքն ուսումնասիրողներն ևս գիտուններ են. ո՛չ ապաքէն մեր հոգեկան կեանքն ալ ունի իւր ուրոյն օ-

րէնքներն, ո՛չ ապաքէն այն բազմազան տպաւորութիւններն ու հմտութիւններն զորս կ'ստանանք, կը համբարենք ի մեզ՝ մէյմէկ կարևոր գործիքներն են մեր մտքի գործողութիւններն օգտակարապէս ի կիր արկող. և յետոյ, մեր գրականութիւնը ունի՞ այսօր բացի քը. նարեքական և գրադատական ճիւղերէն՝ զուտ գիտական, պատմական և իմաստասիրական հարստութիւններ. (ի հարկէ մեր խօսքը միշտ կը մասնաւորենք արդի գործընթացն վրայ, որք, իրենց յայտարարութեամբ, արդի գրական աշխարհին կը տիրապետեն): Արդ, երբ մեզ նման բազմակարօտ հասարակութեան մը գրականութիւնը ինքզինքը պատասխանատու չընկատեր ժողովրդի մտաւորական, բարոյական ու նիւթական զարգացման, ի՞նչ բանի կը պարտի ուրեմն իւր գոյութեան իրաւունքը. այն բացասական գործունէութեա՞ն, որով այսօր մինչև խի դպրոցական սկստանիները կը վարակէ թունալիլ յոռետեսութեամբ մը, յոռետեսութիւն՝ զոր բնապագան ի՞նչ անուանեն, ինչ որ բողբոջիմ հեռի է բընապաշտութեան:

Երիտասարդաց մեծագոյն ոտխըյոռետեսութիւնն է. վա՛յ անոնց որք այդ ոտխին կը հանդիպին իրենց կենաց ճամբուն վրայ:

Կեանքը, Պարոններ, բնութեան ամենէն թանկագին, ամենէն խորհրդաւոր, ամենէն նուիրական մէկ պարգևն է. զայդ անգիտել, զայդ ուրանալ՝ ձեր ամբողջ էութիւնը ուրանալ է. ձեր ձեռքըն է այդ նիւթական ու բարոյական կեանքը դրախտի մը փոխել, ինչպէս և դժոխքի մը. եթէ վերջին միջոցը կ'ընտրէք՝ ազատ էք. բայց միայն ձեր անձին վերապահեցէք զայն. ընկերականութեան թերի կողմերը խոշորացոյցով մեծցնելը ափիօն ծխողներու հիւանդոտ ու տառապող երեւակայութեան արտադրած գաղափարներուն կը նմանի. մենք փոխանակ այդ չարիքներէն սարսափահար մնալու՝ պարտինք յաղթանակ տանիլ անոնց վրայ. մենք հաւատք ունինք թէ աշխարհս գերագոյն իմացականութեան մ'արդիւնք է. մեր իմացականութիւնն ալ, եթէ ոչ այդ գերագունին քանակն՝ գէթ անոր որակն ունի: Աստուծոյ մասնաւոր դիտումով մը կը պարունակէ յինքեան քերիքներ, չարիքներ, որպէս զի շնորհիւ մեր բանականութեան և աշխարհի մասնաւոր դիտումով մը կը պարունակէ յինքեան քերիքներ, չարիքներ: Եթէ աշխարհս իւր ծայրայեղ կատարելութեան մէջ մեզ յանձնուած լինէր, ի՞նչ պիտի լինէր մեր գործը երկրի վրայ. ի՞նչ կերպով պիտի զանազանուէինք անբաններէն:

92 Մարտ 22 ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ Մաքրիգիւղ

ՓՈՒՐԻԿ ՅՈՒՇԱՎԷՊԵՐ

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ

Զեեզ, Ո կոյս, գովեմ եւ փառաբանեմ.

Te deum laudamus!  
Armand Silvestre.

Աքանջելի երազ մը տեսայ: Արքայութեան մէջ էի: Կը տեսնէի տասն և մէկ հազար կուսանաց զայդ զայդ շըրջագայիլն՝ այդ աստղերու պողոտային մէջ զոր Ծիր կաթին կ'անուանեմք: Կարծես հրեշտակաց վարժարանի մը անվերջանալի թափօրն էր այն: Մերթնդ մերթ կանգ կ'առնէին քաղեղու համար լոյսէ ծաղիկներ, որոց թերթերն կը խլէին ճաճանչ առ ճաճանչ. — ինչպէս երկրի վրայ տղայք կը փեթուեն մարգարտածաղիկներն, — և կամ անոնցմով կը կազմէին չփաքի փունջեր և իւրեանց խօսակցութիւնն որ ցած ձայնով էր և փոքրիկ ծիծաղներով խառն, կը նմանէր կարծես միլիոն մը թռչնոց ձուռողման:

Բայց շատ տարիներ նոցա քայլերուն հետեւէ վերջ, — զի Արքայութիւնը կարի ընդարձակ մի բնակավայր է որոյ շրջանն ընել մի քանի ժամուան գործ չէ, — ինքզինքս գտայ այնպիսի շքեղ վայր մը, որ հոգիս վեր ի վայր յուզուեցաւ և աչերս չլացան: Մեր խոնարհ երկնից գեղեցիկագոյն արշալոյսները, մեր գեհե՛նափորիօք կիսաուրց պայծառութիւնը, երեկոյին ծովու վըրայ արեգակին պատճառած բոցաճաճանչ ցողացմունքը, չկարեն գաղափար մը տալ այդ քաղցր, միանգամայն և սոսկալի պայծառութեան վրայ, որոյ մէջէն կ'անցնին՝ արևու լոյսէն առաւել փայլուն՝ անշուկ դասք Սերովբէից: Եւ այդ անվերջ պայծառութիւնն կարծես որ անհուն փայլակ մ'էր սփռուած արշալուսոյ մեղմ և հեշտ լուսով, նոյն ինքըն էր սէր, ուրախութիւն և կեանք: Իւրաքանչիւր լուսոյ շողերու մէջ կը փայլէր առաքինութիւն, իւրաքանչիւր բոց կ'արժարժէր տարապայման զմայլմունք. յափշտակուեր էի և սիրտս լի էր կաթողին սիրով և կրիւք գթութեան: Այդ անձառելի երկնից արևը պարտէր լինել սիրտ մը յորդահեղեղ, սիրտ մը որ կը ճառագայթէ անսպառ:

Այսու հանդերձ տակաւ առ տակաւ աչերս վարժուեցան այդքան պայծառութեան և ընդ որ յայնժամ կարող եղայ նմարել այդ պայծառութեան հետ խառնուած Ընտրեալներ և Ընտրելուհիներ. մի հեշտալից տեսարան պարզուեցաւ յայնժամ աչացս առաջ: Թափանցիկ ալապատթրեայ ձիւնաթոյր

աստիճանաց վրայ բազմեր էին նոքա, ոմանք ծիրանազգեաց, այլք ակնթաշող ձորձերով զարդարուն: Եւ այն երկնակառոյց աչաց մէջ որք կը դիտէին հոյակապ երեւոյթ մը — ասիտո՛ս, ինձ անտեսանելի — և այդ երկնակառկառ բազկաց մէջ, կար արդարև կատարեալ հեշտութեանց անբացատրելի մի հրապոյր:

\* \*

Մօտեցայ մի ընտրելուհւոյ և ծընրագրեցի, ակնապիչ զնէ դիտելով. ինձ նման ի գուճս իջեալ, Գերովբէք արծաթափայլ բուրուառներով կը խնկարկէին զնէ: Ունկն կը դնէր, մտախոհ կ'երևէր և յափշտակուած:

— Ո՛վ Գերերջանիկ էակ, ըսի, թուի ինձ թէ ի տես լոյս դիմացդ երանութեանդ մի մաս զիս կը շրջապատէ և կը թափանցէ յիս: Եթէ երբէք հաւանիք ձեր յաւիտենական երանութեանն վայրկեան մը սթափիլ, խօսեցէք ինձ, խընդրեմ, սա խեղճ արարածին որ երկրէն եկած կրկին հոն պարտի վերադառնալ և որ գուցէ դատապարտուած է դեռ շատ ատեն թափառիլ ցանկութեան և փորձութեան անտառին մէջ, ըսէ՛ք թէ ինչ առաքինութեամբ կամ ինչ սպաշխարհանօք արժանի եղաք հոգիներու երկնային դասին մէջ մտնելու և արծաթեայ բուրուառներով Գերովբէքէ դուրսաուելու համար:

Աչաց բիրբերն խոնարհեցուց, որք վայրկրան մը զիս տեսած լինելուն պատճառաւ մթնցան և մի ձայնիւ, այնքան նման երգի մը, որ կարծես թէ սոխակ մ'էր որ կը խօսէր:

— Կրօնասէր էի, ըսաւ ինձ: Աշխարհի կեանքէ հրաժարեցայ վանք մը քաշուելու համար. թէ և վանական կենաց կանոնները խիստ են, սակայն դեռ շատ մեղմ կը գտնէի զանոնք. հաճոյք կ'զգայի մարմինս շարչարելու մէջ ծոմապահութեամբ և քուրձ զգեցելով. բոլոր օրերս կ'անցնէի օրհներգութեամբ և գիշերն ողջոյն աղօթքով: Ոչ իսկ գիտէի թէ աշխարհի վրայ կը գտնուէին դեռատի աղլուկնք որք անտառը կ'երթան իւրեանց խօսեցելոց հետ և դեռատի մայրեր որք կ'զբօսնուն իւրեանց փոքրիկ մանկանց հետ: Մասունքներու էր միայն որ համբոյրներ կուտայի, և երբ առաւօտեան հնչէր զանդակն որ կը զարթուցանէ տիրոջ հարսերը, չէի դժգոհեր բնաւ մատրան պաղ սալաքարերէն որոց վրայ բոկոտն մնալ ըստիպուած է:

\* \*

Մօտեցայ մի ուրիշ Ընտրելուհւոյ որ մի քիչ առաջ տեսած Ընտրելուհիէս առաւել երջանիկ կ'երևէր: Այնպէս կը փայլէր որ Արքայութեան լոյսն որ այն-

քան պայծառ էր, իրմով կը լուսաւորուէր: Հրեշտակաց ամբողջ Յրդ և Կրդ դասերն՝ Գերովբէից հետ խառն կ'երգէին իւր գովեստը, ճօճելով ոսկիէ բուրուառներ: Նէ ունկն կը դնէր, մըտախոհ էր և երջանիկ:

Գողգոթալով ծունր դրի:

— Ո՛, Սրբուհիդ պաշտելի, ըսի իրեն, ձեզմէ կը բլխի այնքան լոյս ու բոց որ հոգիս կը դողայ, կը խռովի և կը սեղմուի, որպէս չար մի տերև բոցողէն՝ ուժգին հողմի մ'ազդեցութեան տակ: Եթէ հաճիք վայրկեան մը ձեր անսահման բերկրութիւնը մոռանալ, խօսեցէք ինձ. խնդրեմ, ո՛հ, խնդրեմ, խօսեցէք ինձ: Մին եմ երկրի տխուր բընակիչներէն, ուր տառապանք այնքան բազմութիւ են և բերկրութիւնք այնքան հազուագիւտ: Այս խեղճ արարածին որ շատ լացած է և սակաւ ինչ ժըպտած և որ ստորին աշխարհի մթութեան և տառապանաց մէջ դեռ երկար օրեր պիտի անցնէ, ըսէ՛ք թէ ի՞նչ բարեմասնութիւնք արժանի ըրին զձեզ նըմանօրինակ փայլ մը զգեցուց և նմանօրինակ բերկրութիւններ վայելել և գովուիլ հրեշտակաց Յրդ և Կրդ դասերէն որք կը խնկարկեն զձեզ ոսկեայ բուրուառներով:

Սոնարհեցուց, նէ գլուխը, յորմէ ճառագայթներ հոսեցին, և մի ձայնիւ որ կը նմանէր հառաչանաց երկնային տաւղի մը զոր թէ և մը թրթռեց անցնելով:

— Ողորմած էի, ըսաւ ինձ, չէի նըմաներ անոնց որք տօներու գուարձութեանց մէջ կը մոռանան թշուառները և յուսահատները. չէի բաւականանար սոսկ աղօթքով և սին անձնահարութեամբ: Կ'այցելէի աղքատաց. համայն ստացուածքս անոնց կը պատկանէր: Կը ճանչէին զիս ձեռնայարկաց մէջ ուր կը տիրէ թշուառութիւնը: Հառաչանք, լաց ու կոծ, ամէն ինչ վերջ կը գտնէր երբ ներս կը մտնէի: Գիշերները տըլրատեսիլ բնակութեանց մէջ նստած կ'երգէի երգեր որք օրօրոցներու, կը մխրթարէի այրի կիներն և լքեալ ծերունիներու յոյս կը ներշնչէի իւրեանց անհետացեալ որդւոց նկատմամբ: Մահուան հետեւալ օրն պահարանիս մէջ լաթի կտորուանք մ'իսկ չգտան դիակս ամիրոյիլու համար, վասն զի բոլոր սաւաններս կտորտած էի փողոցի մուրացիկ աղայոց չապիկ շինելու համար:

\* \*

Այն ատեն ըսի մտովի թէ շատ իրաւացի է պատուիրել մարդկանց աղօթք և ողորմասիրութիւն, քանի որ այդքան երջանկութիւն և այդքան փառք կան ի վարձատրութիւն: Միանգամայն չկարողացայ զինքս զսպել մեծ տիրութիւն մ'զգալէ, ինչպէս նաև մեծ

կարեկցութիւն մը, աշխարհի վրայ գըտոնող այնքան դեռատի կանանց պատճառաւ որք, ունենալով ուրիշ հոգեր, խիստ քիչ անգամ կ'աղօթեն և մերթ կը գնեն գոհարներ կամ ծաղիկներ այն ստակով որ իբր ողորմութիւն գործածուելու էր: Ի՞նչ, այդ դեռատի կանայք չպիտի բազմին մի՞օր, կը խորհէի, ծիրանիով և յակինթով զարդարուն այդ թափանցիկ պապասթրեայ աստիճանաց վրայ: Բայց մի քիչ հեռի նշմարեցի մի Ընտրելուհի այնքան շքեղ, որ միւս երկուքն անոր հետ բաղդատեալ կարելի չէր: Կը տարբերէր իւր դրացուհիներէն այնքան որքան սոքա կը տարբերէին երկրի աղջկաներէն: Աչքբայրող շլացուցիչ լոյսի մը միջէն միայն կը տեսնէի զնէ: Մարդկային լեզուները չ'ունին բառեր նորա հրաշալի փայլը բացատրող: Կը նմանէր ծաղկանց և բոցեղէն ձիւնոց փունջի մը: Մի քանի Գերովբէներ չէին միայն որ կ'երգէին իւր գովեստը, այլ ամբողջ ինն դասուց և երեք դասակարգութեանց բոլոր ոգիները կը ծնրագրէին նորա առաջ՝ ազամանդեայ բուրուառներ ճօճելով:

Երկրպագի, աչքբայ փակելով:

— Ո՛հ, Ընտրելուհեաց ամենէ հրաշալին և ամենէ երանելին, թոթովեցի. անշուշտ արժանի լինելու համար մի այդքան գերմարդկային շքեղութեան, մի այդքան երկնային երանութեան, ամենէ վեհ մ'առաքինութիւններն ի գործ դրած լինելու էք: Դուք և սաղօթած էք, բայց սովորական աղջկանց անձանօթ եռանդով մը: Դուք ևս ողորմութիւն ստած էք, բայց ողորմասիրութեան մի այնպիսի կատաղութեամբ որ գուցէ անօթի կը մեռնէիք փողոցի մուրացիկաներու յատկացուցած ձեր հացին մօտ: Ո՛հ, յոյժ գթասիրտ Սրբուհիդ, աղօթեցէք ինձ համար:

Նայուածք մը ձգեց իմ վրայ: Աչքբայն այնքան շքեղօրէն կը փայլէին որ մթութիւնս չկարողացաւ պատճառել նորա ստուերի հետք մ'իսկ:

— Ո՛չ, ըսաւ, բնաւ չէի աղօթեր և եթէ կանուխ կը զարթնուի և ուշ կը մտնէի յանկողին, մանասարներու մէջ երթալ ողորմութիւն տանելու համար չէր այն:

Բոլորովին ապշած էի:

— Ո՞րն է ուրեմն այն արժանիքն, հարցուցի, որոյ շնորհիւ, անզուգական երանութիւն, այդքան բարձր փառաց հասաք. ի՞նչ գործեցիք, ի՞նչ էիք—դուք որ ուրիշներէ աւելի կը կրէք յինքեանս դրախտային հրճուանքն, դուք զոր երկնային բանակն ողջոյն առաւել քան զայլս կը գովէ և կը պաշտէ—որպէս զի Տէրն զքեզ արժանի դատած լինի սոյնպիսի վարձատրութեան: Ըսէ՛ք, խնդրեմ, թէ ի՞նչ էր ձեր առաքինութիւնը:

— Գեղեցիկ էի, ըսաւ նէ:

(Քարիւլ Մսնտէս)



ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ ԲՈՒՍՈՑ

Մեր զարմանքը մեծ կը լինի, երբ լրագրոյ մէջ կը կարդամք թէ մարդ մը հարիւր և այսքան տարեկան մեռած է. սակայն անայլայլ կը մնամք, եթէ մեզ ըսեն թէ այն ինչ տեղ կը գտնուի ծառ մը որ մի քանի դարերէ ի վեր գոյութիւն ունի:

Արնօլտ Պօսքօվիցի հետ կը փորձըռիմք հաւատալ թէ բոյսերն յաւիտենապէս ապրելով, մարդն՝ իբր միջատ մը՝ որ օր մը միայն կ'ապրի, կ'անցնի անոնց առջևէն: Ահաւասիկ տարիքն մի քանի հինաւուրց ծառերու որք բուսական աշխարհի մէջ կ'երևին:

Ետնայի մեծ շագանակենին, ծանօթ՝ «հարիւր ձիւնորաց շագանակենին» անուամբ, կը կարծուի թէ տասը դարերէ ի վեր գոյութիւն ունի: Վէրնէյի (Ֆրանսա) մօտերը գտնուող մի ուրիշ շագանակենի, որ միջին բարձրութիւն մը, և չորս մէթր շրջապատ ունի իւր բունին վարի մասին վրայ, 300-350 տարեկան է. ուրեմն այս ծառ տնկուած է երբ կալվին բարեկարգութիւն կը քարոզէր ի Լիկնիէր, Սուրբ Բարթոլոմէ մէնոսի կոտորածէն ժամանակ մ'առաջ:

Ատանսօն (Ֆրանսացի բնապատում) կը նկարագրէ երկու տեսակ հսկայ պատուհաններ. առաջին տեսակը տեսաւ 1454ին Վենետիկցի նաւարիւս կատմաբանը, Սենեկալի բերնին մօտ, և անոր տրամագիծն 32 ոտք գտաւ. երեք հարիւր տարի վերջ Ատանսօն գանոնք չափելով տարբերութիւն մը չգտաւ. նա այդ ծառերու 52 դարերու տարիք մը կը վերագրէ: Երկրորդ տեսակը, նոյնպէս ի Սենեկալ, կ'ըսուի թէ 6,000 տարիներէ ի վեր կայ ու կը մնայ: Ալէքսանդր տը Հոմպօլտ կ'ըսէ թէ ասոնց սկիզբը կը հասնի այն ժամանակաց երբ Պաչ համաստեղութիւնը մեր կողմերը կը լուսաւորէր<sup>(1)</sup>. Ըստ Բիւլվիէյի և Մենդոցի գրքին, այս ծառերը

(1) Երկնակամարի բեւեռին տեղափոխութիւնը գիշերահաւասարաց կէտին յետախաղաց շարժման արդիւնքն է, երբ ո և է տեղւոյ մը համար բեւեռը կը տեղափոխի, բնականաբար հորիզոնի տեսանկյունութեան շրջանակին եւս կը փոխուի, այսինքն կը տեսնուին այնպիսի աստեղք որք ժամանակ մը չէին տեսնուեր, և ընդհակառակը հորիզոնէն վար մնալով չեն տեսնուիր այն համաստեղութիւնք որք կը տեսնուէին. այս կարգէն է հարաւային Պաչ համաստեղութիւնը, որ գրեթէ 40 դար յառաջ կը լուսաւորէր մեր կողմերը, և զոր այժմ չեմք տեսներ. այժմ, Պաչ համաստեղութիւնը հիւսիսային լայնութեան 35<sup>0</sup>էն դէպ ի հարաւ գտնուող երկրաց տեսանկյն է:

նախամարդուն ժամանակակից են: Արնօլտ Պօսքօվիցի կը պատմէ թէ ի Գալիֆօրնիա, Սաքրամանթօյէ գրեթէ երեսուն փարսախ հեռի, գտնուեցան խումբ մը ահագին ծառեր, որք նմանութիւն ունին մայրի ծառին. ասոնց ամենաբարձրը, «Անտառին Հայրը» անուամբ, 420 ոտք բարձրութիւն ունի, և մի ուրիշն, «Անտառին Մայրը» անուամբ, 330 ոտքէ աւելի. 1854ին ասոր կեղևն վերցուցին մինչև 120 ոտք բարձրութեան, սակայն երբէք չլնատուեցաւ: Օրօթավայի մօտերը, Թլնէրիֆ (Բանարեան) կղզւոյն մէջ կայ ծառ մը որոյ բունին շրջապատը 20 մեթրէ աւելի է, և որոյ կենաց Պէրթըլօ 50 դարեր կուտայ, այնպէս որ — ըստ Ս. Գրոց — աշխարհիս ստեղծմանէն ի վեր կայ:

Չուիցերիացի երեկի բուսաբան Տը Գանտօլ հաստատապէս կը հաւատայ թէ երկրագնդին վերջին շրջանի յեղափոխութեան վկայ բոյսեր կը գտնուին. էօնօէր ևս կը հաւատայ թէ պատմական ամենահին յիշատակարանաց հաւասար հնութեամբ ծառեր կան:

Նուազ երկար տարիք ունեցող ծառերէն իբր օրինակ կրնամք հետեւեալներն յիշել. 1847ին, Պ. Շըվանտիէ գիտութեանց Ակադէմիային կը հաղորդէր թէ եղևինը լաւագոյն պայմանաց մէջ մինչև 115 տարի կրնայ աճիլ, իսկ յուսեգոյն պայմանաց մէջ մինչև 76 տարի. և սակայն, ի մէջ Տօլէնի և Փրէ-Սէն-Տիդիէյի, Պէքէ լերան վրայ, Մօն-Պլանի հարաւային գառիվարին ստորոտը եղևին մը կայ «Ախոս Շամուայից» անուամբ, որոյ շրջապատն է իւր արմատին վրայ 7մ, 62, և 4մ, 80 առաջին ճիւղին մօտ. այս առաջին ճիւղն իսկ 2մ, 75 շրջապատ ունի. Պէրթըլօ զայն 1200 տարուան կ'ենթադրէ: Այս եղևնի ծառէն մի քիչ հեռու, Ֆէր անտառին մէջ, Պլանչ անուանեալ ծառուղւոյն ձորին մօտ, կը գտնուի կուենի մը որ 5մ, 45 շրջապատ ունի, և որ առնուազն 800 տարեկան պէտք է լինի: Վօփ նահանգին (Ֆրանսա) Փարսի-Սէն-Ուէլն անտառին մէջ կայ կաղնի մը «կաղնի ասպատակաւոր զօրաց» անուամբ, որ իւր բունին վարի կողմը 13 մեթր, և առաջին ճիւղին մօտ 5մ, 70 շրջապատ ունի, բարձրութիւնն է 33 մեթր, 25 մեթր թևատարածութեամբ. այս ծառ վերջին 7 դարերը տեսած է անշուշտ, ըսկըսելով Ֆիլիք-Օկիւսթի ժամանակէն, յայնժամ որ Բուլթիէք կ'աւերէին գծրանսա: Վէրսայի դղևիկն նարնջենեաց պարտիզին մէջ, մի քանի տարի յառաջ չորացաւ պատմական թրնջի մը որ 450 տարեկան էր:

Թարգ. ԹԱԹՈՒԼ ՔԻԻԲԷԼԵԱՆ Այնթապ

ՅՈՊՊԷԻ ՎԱՆՈՒՑ

Աւխարհաճանօթ պահակ Սեւամորքից անակնկալ մահը

Բայց ո՞վ էր պահակ Սեւամորքը:

Ասկից իբր քառորդ դար յառաջ, Երուսաղէմ եկող սեւամորթերէն Երուսաղէմացի գրագիր Պ. Յովհաննէս անուն անձը 8-9 ամեայ սեւամորթ մը կ'առնէ իւր տան ծառայութեան համար. ճարպիկ սեւուկն շատ չտեւեր իւր տիրոջ տան սիրելին կը դառնայ, և երկու տարի յետոյ իրեն որդեգիր կ'ընէ. շուրջ տասն տարի մեծ հլութեամբ և ամենայն հաւատարմութեամբ իւր ծառայական պարտաւորութիւնքն անսըրտունջ և անթերի կատարելով հանդերձ, նոյնքան ժամանակուան մէջ զարմանալի կերպիւ կը զարգանայ մարմնով և Հայ լեզուն կը սովորի շատ յստակ ու մաքուր՝ հանդերձ բաւական ընթերցանութեամբ. յետոյ տէրը կը մեռնի և քիչ ատենէն պարագայից բերմամբ Ս. Յակովբայ Վանքը կուգայ. այդ միջոցներուն Յովսէփի վանուց մարդ պէտք ըլլալով, սեւամորթը կը դրկուի իրբեւ միաբան, ուր կատարեալ հսկայական տիպ մը կ'առնու և կարծես ամենայն հանգամանօք պահակութեան խրոխտ և փառաւոր պաշտօնին համար ստեղծուած միակ մարդը կը դառնայ. վերջապէս կ'ըլլայ այդ գործին տէրը, և իբր տասնեամէկ տարի շարունակելով շատ մեծ անուն և յարգ կ'ստանայ. ի՞նչու. որովհետև ամէն տարի աշխարհի չորս կողմէն հազարաւոր Հայ ուխտաւորք երբ շոգենաւով Յովսէփ կը հասնին, շուարեալ վիճակաւ իրենց աչքին չորս կողմ շրջելով Հայերէն գիտցող մը կ'որոնեն որ զիրենք առաջնորդէ ուղղակի դէպ ի Վանք. և ահա՛ կը ներկայանայ իրենց չեչտակի ձևով, բարձրահասակ, հսկայատիպ և ահարկու սեւամորթ մը (բայց տաք արիւնով), որ մեծ մեծ աչքերը բացած, և կիսաթանձր շրթները ձգած, խարաղան ի ձեռին հայերէն մաքուր բարբառով կը հարցնէ անոնց որոտագին. «Դո՛ւք Հայ էք, ուխտաւոր էք», և երբ դրական պատասխան ընդունի, մէկ խօսքով իսկոյն կ'ապահովացնէ զանոնք ըսելով. «Հոգ մի՛ ընէք, հիմա ձեր բոլոր ունեցածով հանգիստ կը տանիմ զձեզ Վանք»: Ի լուր սեւամորթի հայացի խօսից, նախ խեղճ ուխտաւորք յապուշ կը կրթին, բայց յետոյ իսկոյն բոլոր ինչքերով անոր կը յանձնուին. նա չգանդաղիր, այլ անմիջապէս վանքի նաւաստեաց և

բեռնակրաց հարկ եղած հրամանները կ'ընէ՝ ուխտաւորներուն և անոնց գոյքերուն նկատմամբ, և զանոնք իւր ետեւը ձգելով՝ խրոխտաբար կը ճեղքէ խառնիճազանձ ամբօրը, կ'իջեցնէ մակոյկ և ամենայն ապահովութեամբ կ'առաջնորդէ Վանք. ( իւր այս մեծ ծառայութիւնն աւելի գնահատելի կ'ըլլայ մանաւանդ ծովու արեւոտեալ ժամանակ) . բայց ո՛չ այսքան միայն, այլ անոնց Երուսաղէմ երթալու կառք, և այլն, ալ ինքը վարձու կը բռնէ . երբ վերադառնան՝ նորէն նաև կ'առաջնորդէ ու այնտեղ զանոնք կը տեղաւորէ : Ահա՛, այնքան տարիներ, ուխտաւորաց նկատմամբ այնքան ծառայութեամբ աշխարհածանօթ տարաբախտ սեւամորթը՝ հազիւ 34 տարեկան առողջ հասակաւ անցեալ ուրբաթ օր իւր տանը մէջ կաթուածահար լինելով, խնայն կ'աւանդէ հոգին՝ թողլով ի մեծ սուգ սև ամուսինը և չորեքամեայ սեւագոյն դուստրը : Թախծանօք կ'ըսեմք միայն, Աստուած հոգին լուսաւորէ . . . :—

Մեր այս տողերը վերջացնելէ յառաջ, առանց չափազանցած լինելու կը յաւելումք թէ՛ տարաբախտ սեւուկը՝ իւր մետասանամեայ պահակութեան օրով Յոսիպէն անցնող բոլոր ուխտաւորաց ուշադրութիւնն ու համակրանքը միանգամայն գրաւած էր առ ինքն, որչափ իւր եղակի տիպարով, այնքան ևս քաղցր բնաւորութեամբը, որովհետև հակառակ իւր հարկու տեսքին, շատ յանկուցիչ լեզու մը ունէր, և ամէն կարգի մարդկանց խնդիրքը կատարելու մեծ պատրաստականութիւնն ցոյց տըռած էր միշտ . չիչեմք նաև թէ՛ բարեպաշտական պարտաւորութեանցն ալ բաւականին հոգատար էր :

Այսքան տողերը կարծեմք կ'արժէր նուիրել իւր յիշատակին :  
Երուսաղէմ . . .  
14 մարտ 1892

**ԿՅՐՈՒԱԾ ԳԼՈՒԽՆԵՐ**

Մայրաքաղաքաց մէջ, գլխատութենէ յետոյ, բժշկական ժողովոյ կողմանէ պատուիրակ մը դատապարտելոյն գլուխը կը խնդրէ գիտելու համար թէ գլուխն իրանէն բաժնուելէ յետոյ դեռ ո՞րչափ ժամանակ կ'ապրի : Այս փորձեր դեռ կատարելապէս չեն յաջողած : Վիրձ մեծանուն Պէլճ նկարիչը համաձայնութիւն մը գոյացուց բարեկամ բժշկաց հետ որ մազնիսացնեն զինքն ու թելադրեն, տեղեկանալու համար մահապարտին հոգեկան վիճակին այն վայրկեանին ուր՝ գլխատուողն կառափնարանը պիտի հանեն :

Վիրձին ընկերացող բժիշկը հարցա-

քննեց զնա՝ մահապարտին գլուխը վար իյնալէ յետոյ :

— Ի՞նչ կը տեսնես, ի՞նչ կ'զգաս :  
— Մարտա՛փ, գլուխը սաստիկ կը տառապի, կ'զգայ, կը մտածէ, բայց չը հասկնար ինչ որ անցաւ, մարմինը կը փնտռէ, իրեն այնպէս կը թուի թէ մարմինը պիտի երթայ զուգաւորիլ գլուխուն քով, մահու կը տենջայ, բայց մահը կը խուսափի իրմէ : Բոլոր այս տանջանքներն իրեն անվերջ կ'երևին և կը գուշակէ թէ մարմինէն բաժնուած է : Բժիշկը դարձեալ հարցուց .

— Ի՞նչ կը տեսնես, և ու՞ր ես :  
— Անջրպետին մէջ կը տատանիմ, պատասխանեց քնածու նկարիչն, որպէս խեցի մը հրոյ մէջ, բայց մեռած եմ, ամէն ի՞նչ վերջացած է . եթէ զիս կրկին մարմնոյս հպեն, կենդանացած եմ վերստին . . . կը մտածեմ, կ'զգամ, ու ամէն ինչ կը յիշեմ դեռ . . . խեղճ կինս, պզտիկ պէպէս . . . ալ զիս չես սիրե՞ր, զիս կը լքանե՞ս . . . ո՛հ, այս ինչպէ՞ս պիտի վերջանայ, Աստուած իմ . . . որչա՛փ ցաւ . . . հեռուն պզտիկ աստղ մը կը նշմարեմ, ինչպէս գոհար մը որ կը փայլի, մարդս որչա՛փ երջանիկ կերպիւ կը ննջէ վերը խաղաղ . . .

Այս բառերն արտասանելով քնածուն սթափեցաւ, վերջացուց փորձը . եթէ քնածուն կատարեալ կերպիւ ծանօթացուց յօշոտեալ գլխոյ մը բոլոր ըզգացումներն, պէտք է եղրակացնել որ, գլխատեալ գլուխ մը մի քանի երկվարկեան իւր ամբողջ մտածմանց կարողութեամբ կ'ապրի դեռ :

Իտալական Corréio do Povo թերթը տօքթէօր Բիէնի փորձերը կը պատմէ զորս ըրած է գլխատեալ գլխու մը վրայ, ապացուցանելով նկարիչ Վիրձի եզրակացութիւնը : 1882 ին Տօքթէօր Բիէն գաղղիական բանակին բժիշկը լինելով, ներկայ գտնուեցաւ չորս դատապարտեալներու գլխատման, առիթ համարելով զայս՝ գլխատեալ գլխոյ մը վրայ կարեւոր գիւտեր ընելու : Սոցա գլուխներն, ջրուտ և զօրաւոր, հազուադէպ կարողութիւն և անզուգ կորով ցոյց կուտային՝ իւրեանց մկանունք աստիճանաբար տարածուած լինելով : Գլխատութիւնն այսպէս կատարուեցաւ . գլխատելոց ձեռքերը ետև կապեցին և զիրենք քարի մը առջև կեցուցին : Լաւ մը կապելով բոլոր մարմինը, Գահիճն իւր զոհին պարանոցին վրայ նըշան մ'ընելով, ե-ի-աւ-ը բարձրացուց և մէկ հարուածով երկուքի բաժնեց մարմնոյն վերի մասն :

Գլուխները գետին ինկան միօրինակ դրից մէջ, արևնահոսութիւնը յապաղելով կարծես կենդանի թաղուած գլուխոյ նմանութիւն ունէին :

Գլուխներէն միոյն յատուկ ուշադրութիւն ընելով, Տօքթօն Բիէն ապշած մնաց, տեսնելով որ աչերն ուղղակի զինքը կը դիտէին : Չուզեց հաւատալ, բայց մտածելով երևութիւն վրայ, անոր շուրջը շուտով շրջանակ մը գծեց, հաստատելով որ այս շարժման մէջ աչերն իրեն հետևած էին :

Յետոյ աչերն անշարժ դիրք մ'առին, սոյն վայրկեանին գլխատելոյն դիմաց վրայ իյայտ եկան սոսկալի ցաւոց արտայայտութիւն . բերանը սովորականէն աւելի բացուելով ու գլուխը հաւասարակչութիւնը կորսնցունելով, գետնին վրայ գլորեցաւ : Մեռած էր :

Գլխատութեան վարկեանէն մինչեւ վերջին դէպքն քառասուն երկվայրկեան սահած էր :

Գասը-գիւղ  
ԼԵՒՈՆ ԽԱՆՏԱՆԵԱՆ

**ՊՈՒՏՏՍՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ի ԲԱՐԻՉ**

Ընտրական Պուտտայականութեան Ուսումնարան մը հիմնուած է ի Բարիչ, Վերատեսուչի մը տնօրէնութեան ներքեւ :

Այս ուսումնարան կը բաղկանայ սահմանեալ թուով աշակերտներէ և անսահման թուով ընկերակիցներէ : Իւրաքանչիւր աշակերտ յանձն կ'առնու կէտ առ կէտ հպատակիլ Ուսումնարանին սկզբանց և կատարել անոր օրինադրած բարոյական պարտաւորութիւնները . բաց աստի, կը խոստանայ՝ վերստեջին մահուան ժամանակ՝ յաջորդեալ անոր, եթէ աշակերտաց ընդհանուր ժողովն ընտրէ զինքը այդ պաշտօնին : Իսկ ընկերակիցք պարտաւորութիւն ունին միայն կուսակից և ջատագով հանդիսանալու Ուսումնարանին սկզբանց և կանոնաց :

Պարբերաբար բանախօսութիւններ տեղի պիտի ունենան վերատեսչին և աշակերտաց կողմանէ . ընկերակիցք պիտի հրաւիրուին այս բանախօսութեանց :

Աշակերտք և ընկերակիցք պիտի վճարեն տարեկան տուրք մը որուն որքանութիւնը իրենք պիտի որոշեն՝ իրենց վաստակին համեմատ : Եթէ երբ և իցէ վարուց դէմ ծանր կերպով մեղանչեն, Ուսումնարանէն կ'արտաքսուուին, և իրենց վճարած վերջին տարետուրքն իրենց կը վերադարձուի :

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՅՑԵՔԱՐՏԻՑ**

Ամէն լեզուաւ, մախուր եւ ընկիր քոյով

Հարիւր հատի հաշուով՝ մէկ և երկու տողերու համար 10 դրուչ, երեք և չորս տողերու համար 15 դրուչ : Գաւառներէն եղած յանձնարարութեանց հետ պէտք է մէկ դրուչ աւելի զրկել փօստի ծախուց համար : Դիմել « Ծաղիկ » ի Յանձնակատարութեան Գրասենեկին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգղիոյ մէջ հանքածխոյ խնդիրը դեռ կը շարունակէ. շատ հանքեր չեն գործեր, որով նոյն հանքերու գործաւորները, ածուխը փոխադրելու յատկացեալ 200է աւելի նաւերու նուազն ու ածխոյ պահասութեան համար փափուած գործարանաց բանուորներն աւուր հացի կարօտ թշուառ վիճակի մէջ կը գտնուին: Միւս կողմանէ մանածի խնդիր մ'ալ կը ծագի: Մանածի գներն ինկած լինելով, Մանչէսթըրի մանարանք խօսք մէկ ըրած են յառաջիկայ ամիս փակել իրենց գործարաններն որով գործաւոր դասը 50000 անգլ. ոսկի կը կորսնցնէ:

— Յուստասանցի հանգուցեալ Պ. Վասանիս 17000 անգլ. ոսկի կտակած է Աթէնքի նաւային վարժարանին և 400000 ոսկեոյ անշարժ կալուածք իւր ազգին այլ և այլ մարդասիրական հաստատութեանց:

— Իերմանիոյ Ռայխսբալին մարտ 29ի նստին մէջ շրջուն մարտանաւ մը շինելու համար Քարբիվի Զորավարին խնդրած 2 միլիոն մարքի վարկը մերժուեցաւ: Այս անշարժութեան պատճառն է կրթական ծրագրին ետ առնուելուն համար կաթոլիկ երեսփոխանաց զգացած դայրոյթը:

— Ֆրանսայի ծերակոյտն ընդունեց է պատերազմական նախարարութեան խնդրած յաւելուածական վարկերը, զորս արդէն ընդունած էր Երեսփ. ժողովը: Այսու նոր յաջողութիւն մը ըստացած է Պ. տը Ֆրէսինէ:

— Պուլկարիոյ ելմտական նախարարին՝ Պ. Պելչեվի տարի մ'առաջ ըսպանուելուն դատը տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբթու: Հարցաքննութիւնք մինչև հիմա դադտնի պահուած են:

— Սերպիոյ նախարարութիւնը դարձեալ փոխուեցաւ. Պ. Բասիչ՝ նախարարապետ և առժամեայ ելմտից, Պ. Միլոսավլիչիչ՝ ներքին գործոց, Պ. Տիւլանիչ առևտրական գնդապետ, կըրուիչ՝ պատերազմական, և Պ. Շորճեվիչ՝ դատական գործոց նախարար եղան:

— Տահուլլի (Ափրիկէ) վեհապետը որ դաշնակցած էր Ֆրանսայի հետ, դարձեալ չէ կրցեր զսպել իւր հսլատակները որք Քոթոնուի մօտ միջանի գիւղեր աւարի տուեր են:

— Իերման սպայներ Ռուսիոյ սահմանագլխոց, նա մանաւանդ Վարչաւոյ ամրութիւնները օգապարկով կը քննեն գաղտագողի:

— Պելիոյ արտաքին գործոց նա-

խարար հանգուցեալ Շիմէյ իշխանին տեղ՝ ելմտական նախարար Պ. Պերնաէր առժամեայ նախարար անուանուեր է:

— Իերմանիոյ կայսեր առողջութիւնը լաւացած կը համարուի, որովհետե 70ի պատերազմին մէջ համաւաւոր եղող Ալվէնուլէպէն զօրավարին յուղարկուութեան ներկայ գտնուեր է հետիոտն:

— Արիական ծովուն մէջ կարգ մը խրուածիներ Իտալացի ձկնորսաց վրայ յարձակում մ'ըրեր են. այս խնդիր բաւական յուզեալ վիճաբանութեանց տեղի տուեր է Իտալիոյ Պորհրդարանին մէջ:

— Նիւ-Եորքէն Լոնտոն 60000 տոլարի ոսկի զրկուեցաւ ապրիլ 9ին: Մայիս 1էն մինչև յուլիսի վերջն ալ 4 միլիոն անգլ. ոսկի պիտի զրկուի:

— Արժանքիմի հանրապետութեան ելմտական վիճակը տակաւ առ տակաւ կը բարոնդի և ներքին փոխառութեան ապրիլի կտրոնը վճարուած է:

— Պիզարի իշխանին ծննդեան 77րդ տարեդարձը մեծ շքեղութեամբ տօնուեցաւ բովանդակ Գերմանիոյ մէջ: Համակրական ցոյցերն որք եղան նախկին նախարարապետին, յուսացուածէն աւելի էին:

— Բիէն Լօթի ընդունելութիւնն ի Փոնսակոն ակադեմիա, տեղի ունեցեր է ապրիլ 7ին, ի ներկայութեան խուռն հանդիսականաց:

— Ֆրանսական կառավարութիւնն ելմտացոյցի յանձնաժողովոյ մէջ յայտարարեր է թէ մտադիր չէ ձեռնարկելու գաղթային նոր երկրակալութեան մը:

— Ի Փարիզ, նախարարապետն, արտաքին գործոց նախարարը և գաղթականութեանց խորհրդականը ելմտացուցի յանձնաժողովին մէջ առաջարկեցին կայաններն ամրացնել ի Սուտան: Յայտարարեցին նաև թէ, պէտք է Ֆրանսացւոց դիրքերը պահել ի Տահուլլէ և միջոցներ ձեռք առնուլ Ֆրանսացիները պաշտպանելու համար. առ այժմ պէտք չեն տեսած արշաւել Ապոմէի վրայ, մայրաքաղաք Տահուլլէի, բան մը որ արդիւնքէ աւելի ծախք կը պատճառէ:

ԹԱԼԻՄԸ ԳԻԹԱՊԷԹ, Էմիսոմ ՄԻԻ. ԲԷՄՄԷԼ ԻՆՇԱ. Հեղինակ Րէչատ: Թուրք նշանաւոր գրագիտաց հատընտիր հատուածոց Հաւաքածոյ մ'է, յաւելուածովք և սրբագրութեամբք երկրորդ անգամ ի լոյս ընծայեալ: Գին 12 1/2 դրուլ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաեսօնաբաթիսուքիւն. — Րիֆաթ էֆ. Վանայ մէքթուպճի. — Հասան Սայրի փաշա՝ Ռոտտոթոյի կառավարիչ: — Իպրահիմ Էտէէմ էֆ. Արաբկիրի (Սարբերդ) նախ. — Իսմայիլ Հաքքը էֆ. Բասենի (Կարին) և Մէհմետ Իզզէթ էֆ. Լիճէի (Տիարպէքիր) գայմազամ անուանեցան:

Ասիան. — Կարնոյ վերաքննիչ ատենի պատժական ճիւղին նախագահ՝ Իսմայիլ էֆ. և Թէրնէմանը Հազիգաթ լրագրոյ արտօնատէր և Թաղապետութեան Ա. շրջանակի տնօրէնի օգնական ձէվտէթ էֆ. և Սանիյէ Միւթէ: մայիլ. — Կարնոյ նոյն ատենին ընդհանուր գատտիսազ Ահմէտ Լութֆի էֆ. և նախնական ատենին պատժական ճիւղին նախագահ Նաշիտ էֆ. և, Գաղատիոյ մարդահամարի նախորդ տնօրէն Րէֆէթ էֆ. և Սաաէթ լրագրոյ տնօրէն Էօմէր էֆ. և, Տրապիզոնի մարդահամարի տնօրէն Մուսթաֆա Ֆազըլ էֆ. և, Հեռագրական վերատեսչութեան հաշուակալութեան դիւանի տնօրէն Կարապետ էֆ. և, դեր-տնօրէն՝ ձէմալ էֆ. և Բ. դեր-տնօրէն Պէհէթ էֆ. Սանիյէ Բ. — Կարնոյ ընդհանուր գատտիսազի օգնական Հիւսէյին Հիւանի էֆ. և Սալիսէ աստիճանները տրուեցան:

Պաեսուանեան. — Մեծ-Եպարքոս և Կայս. աւագ թիկնապահ՝ Բարձ. ձէվատ փաշայի և Եգիպտոսի նախորդ իտիվ Բարձ. Իսմայիլ փաշայի որդի և Ձինուորական Քենիչ Յանձնաժողովոյ նորընտիր անգամ՝ Իպրահիմ փաշայի Ականակուռ Մէհիտիյէ. — Անտիքայ Յունաց Պատրիարք Տ. Սբիթիտիոնի՝ Ա. Մէհիտիյէ. — Պիզայի կառավարիչ Ձիվէր փաշայի՝ Բ. Օսմանիյէ. — Էրկէրէի կառավարիչ Մէհմէտ Էմին պէյի և Հըլէի կառավարիչ ձէլալ փաշայի՝ Գ. Մէհիտիյէ. — Պաղատտի Իտարէի ժողովոյ անգամ Ապտիւլբատէր փաշայի՝ Դ. Օսմանիյէ. — Օֆի գայմազամ Մէհմէտ Ձիեա էֆ. և Տրապիզոնի Իտարէի ժողովոյ Ա. քարտուղար Արիֆ Հիքմէթ էֆ. և Մէհիտիյէ. — Ձմիւռնիացի վաճառական Թէլիօղլու Տիմիթրաքի էֆ. և Մէհիտիյէ պատուանշանները շնորհուեցան:

— Կայս. թիկնապահ՝ Ահմէտ էյուպ փաշա, որ Եգիպտոսի իտարիին կայսերական Ֆէրմանն ու անոր շնորհեալ պատուանշանը կը տանի, իւր հետեւորդներով երկուշաբթի օր Աղէքսանդրիա ժամաներ և յատուկ կառավարմամբով Գահիրէ գացեր է: Երեքշաբթի փոխադարձ այցելութիւնք կատարուեր են: Չորեքշաբթի կայս. Ֆէրմանը կար-

դացուեր է մեծ հանդիսիւ և թնդանօթի հարուածներ արձակուեր են: Գիշերը չքեղ լուսավառութիւնք տեղի ունեցեր են: Վերջին հեռագիր մ'ալ կ'ըսէ թէ այդ ընթերցումն տակաւին տեղի չէ ունեցած:

— Զէյրէի (Տրապիզոն) Յունաց եկեղեցին վերաշինուելու արտօնուեր է:

— Նիկովիդիոյ Տիւրքու ըսուած տեղը խրած Բարսեանի ընկերութեան Լաֆոնիա շոգենաւը ջրոյն երեսը հանուեր է:

— Տասանորդական տրոց գանձման առթիւ ծագած դժուարութիւնները հարթելու համար զրկուող քննիչներուն օրական 5-30 դր. վարձք պիտի տրուի ըստ հեռաւորութեան:

— Տրապիզոնի Իւնեսա գաւառակին մէջ ձերբակալուեր է Կուրճի Սալիհ աւազակը:

— Գասթամուրի արհեստական վարժարանին ատաղձագործութեան ուսուցիչ կարգուած է Գէորգ աղա՝ Սեբաստացի վարպետ մը:

— Քաղաքացի ընկերութիւնը գործարան մը շինել կուտայ ի Ֆրնտըզը, շինութեանց համար հարկ եղած պիտոյքը պատրաստելու համար:

— Պուլկարիոյ նախորդ գործակատար Տոքթ. Վուլքովիչի սպանիչը՝ Մերձան և մեղսակիցը՝ Խրիսթօ, սպանութենէն երկու օր յետոյ ձերբակալուած էին: Արդ, սոցա հարցաքննութիւններն աւարտելով, գրութիւնք Արդարութեան գործոց նախարարութեան յանձնուեր են և դատն ալ ի մօտոյ Եղեռնադատատենին առջև պիտի տեսնուի:

— Լըպէ դրամասան Տեարք իրենց պահանջատեարց ժողովոյն առաջարկած են տարեկան 1/2 25ով չորս տարիէն վճարել իրենց պարտքն, և երբ գործերն լաւ երթան 1/3 ալ տոկոս տալ: Հիմա տետրակները կը քննուին:

— Դօնեայի կուսակալութեան խնաց տրուած է որ արտի մը երկրորդ անգամուան բերքէն ալ տասանորդի տուրք առնեն:

— Պաղտասի կուսակալութեան համար մասնաւոր դատական քննիչ մը պիտի կարգուի:

— Կիւմիւլիցի վճռագրոց գործադիր պաշտօնեայ Իպրահիմ Էֆ. վեցամսեայ բանտարկութեան դատապարտուած է, զանազանաց պարտամուրհակները գանձելով իւրացնելուն համար:

— Մարդահամարի գործողութիւնները կանոնաւոր տեսնելու և անփոյթ պաշտօնեայները յետ քննութեան պաշտօնանկ ընելու հրահանգ զրկուած է գաւառները:

— Վանայ նախորդ կուսակալ Խա-

լիլ պէյի Առիւծու և Արեգական Ա. կարգի պատուանշանը նուիրուած է Պարսից կառավարութենէն:

— Ուրալուի մասին Հանրագուտ շինութեանց նախարարութիւնը որոշած է. էրէնքէյ նոր տնկարաններ հաստատել, մասնագէտ մը բերել տալ Եւրոպայէն ամերիկեան դրութիւնն ուսուցանելու համար, վարակեալ վայրերէ որթատուակի փոխադրութիւնն արգիւլել, ամերիկեան տունկեր գործածողները 10 տարի տասանորդի տուրքէ ազատ կացուցանել, նահանգաց տիպար ագարակներուն մէկ մասը տնկարանի վերածել, այգիները միշտ քննել տալ: Ասոնց ծախուց կէսը պիտի վճարէ Կայս. կառավարութիւնը և կէսն ալ Հանրային Պարտուց վարչութիւնը: Զմիւռնիոյ մէջ ևս տնկարան մը պիտի հաստատուի որուն ծախքերը պիտի հայթայթուին նոյն նահանգէն արտածեալ չամիչին վրայ 20 փարայի տուրք մը դնելով: Այս առթիւ Հանրագուտ շինութեանց նախարարին նախագահութեամբ չորս անգամէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է ծախուց հսկելու համար:

— Վանայ վերաքննիչ ատենի անդամ՝ Տավուտեան Կարապետ և ոստիկան Աւետիս իրենց ապօրէն ընթացից համար դատաստանի պիտի ենթարկուին:

— Թէմպէի վարչութեան մաքսային գործառնութեանց մասին մաքսատան մէջ կազմուած յանձնաժողովը իւր պաշտօնն աւարտեր է:

Թէմպէի Բէժին գաւառներն ամէն կողմ սկսեր է գործի: Մայրաքաղաքիս մէջ ալ բոլոր վաճառականաց թէմպէիները բարձր գներով առնուեր են: Եւ իւր առաջին մասնական վճարումն՝ 10,000 ոսկի՝ ըրած է Կայս. կառավարութեան:

Նոյն վարչութիւնը ձրի արտօնագրեր տուած է ծխավաճառաց՝ թէմպէի ալ վաճառելու համար:

— Նահանգաց խճուղիներու քննիչ անուանած է Էվլամբիոս Էֆ:

— Ի Ֆէզան ցորենի արտադրութիւնն նուազ լինելով, արտեաց արտածումն արգիւլուեր է:

— Մուսանիա-Պուսա երկաթուղոյ գծին վրայ չորս կայարան պիտի շինուի փոխանակ երեքի: Երկաթուղոյն շինութիւնն թէև ամբողջապէս աւարտած է և բացումն ի մօտոյ տեղի պիտի ունենար, սակայն գծին այլ և այլ մասերն թերութիւններ ունենալով, անոնց լրացման համար յետաձգուած է բացումը:

— Բէժիի դէտերն ամենեւին չպիտի կրնան առանձինն տուներ խուզարկել:

այդ գործողութիւնն միշտ կառավարութեան հաւանութեամբ պիտի կատարուի:

— Կայս. գորաբանակաց շարժման պահուն գետերէ անցնելու դիւրութեան համար հինգ շոգեմակոյկներ շինուած են:

— Իզմիր-Այսրն երկաթուղոյն բաժնետոմսերու իւրաքանչիւրին մէկ օսմ. ոսկի շահաբաժին կը վճարուի երեկուրնէ սկսեալ Օսմ. Պանքային կողմէ:

— Այն բանաւրկեալ որք իրենց պատժոյն 2/3 մասն աւարտած են, Կայս. Իրատէի մը համաձայն յառաջիկայ տօնական օրերուն առթիւ ազատ պիտի արձակուին:

— Զմիւռնիոյ Հելլենական հիւպատոս՝ Պ. Արկիրօբուլոս նոյն պաշտօնով երուսաղէս փոխադրուած և իրեն յաջորդած է Պ. Տրաքօբուլոս:

— Միխայիլի նեղուցը մաքրուել սկսած է. սակայն նեղուցին ներքին մասն ամբողջովին մաքրել առ այժմ անկարելի լինելով, միայն ինչ ինչ մասերը պիտի մաքրուին որով մաքսատան առջևէն ոչխար ու կարասի պիտի կարենայ փոխադրուիլ:

— Քիոսէն երէկի թուով հեռագիր մը կ'ըսէ թէ առաւօտուն երկու անգամ երկրաշարժի թեթեակի ցնցումներ տեղի ունեցեր են:

— Սիմոպի հեռագրատունն այսուհետև օտար լեզուով հեռագրեր ալ պիտի ընդունի:

— Ասաբազարի հարցաքննիչ դատաւոր կարգուած է Խուլուսի պէյ:

— Ամասիոյ նորակառոյց գինուորական շէնքն աւարտելով բացումը կատարուեր է:

— Օսմ. Կայս. Պանայի և Բէժիի պաշտօնատուները որք կը շինուին ի Ղալաթիա, յառաջիկայ ամիս պիտի բացուին: Սըր Էտկար Վինսընդ արդէն փոխադրուած է հոն: Ամբողջ շէնքին աւարտելէն յետոյ երկու յարկեր պարապ պիտի մնան որոց մասին դեռ ոչինչ որոշուած է:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

- Կ. Մ. Կ. Ի Թարսուս. — Ղրկուեցան:
- Գ. Յ. Ք. Ի Թրիպօլի. — Ղրկուեցան. տակաւին կը պարտիք 32 1/2 դր:
- Նամակ կ'ստանաք ուրիշ անգամ:
- Մ. Ա. Ի Տէնիզի. — Ստացայ:
- Գ. Մ. Ի Մաղնիսա. — Ձեր նամակն առած եմք ժամանակին. բայց այդ գումարը տակաւին չկրցանք ստանալ Ձեր նշանակած տեղէն:

|                         |     |             |        |
|-------------------------|-----|-------------|--------|
| Ա Ր Ժ Է Ք Գ Ի Ր Ա Մ Ո Ճ |     |             |        |
| Օսմ. լիւրան 100 դր. էն  |     |             |        |
| Մէքիտիլէ                | 108 | 8 վեցնոց    | 402    |
| Քուսուրգ մէքիտ          | 106 | Իստիոյ բօլ  | 89 30  |
| Մանր մէքիտ              | 100 | Նաբոլէոն    | 87 22  |
| Մէթալիք                 | 96  | Գրիմից      | 51 15  |
| Հինգնոց                 | 101 | Անգլ. լիւրա | 440 3  |
| Մասնէթ թղթագրամ 8 89    |     |             |        |
| Գոնսուլտէ               | 21  | Բուս. երկ.  | 72 1/2 |
| Թահպիլ. Օսմ.            | 76  | Թասպիլէ     | 49     |

# ԲՈՒՄԵԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

133րդ վճարի վճարման ցուցակ

1 Ապրիլ Ն. Տ. 1892

| OBLIG. N° | PRIMES FRS |
|-----------|------------|-----------|------------|-----------|------------|-----------|------------|-----------|------------|
| 1840010   | 600,000    | 970680    | 3,000      | 776946    | 3,000      | 1670678   | 1,000      | 601595    | 1,000      |
| 1846895   | 60,000     | 1904344   | »          | 164695    | »          | 1181988   | »          | 442230    | »          |
| 857845    | 20,000     | 1332891   | »          | 1937685   | 1,000      | 212933    | »          | 945546    | »          |
| 741039    | »          | 863667    | »          | 320330    | »          | 1607773   | »          | 1968040   | »          |
| 1108212   | 6,000      | 1107798   | »          | 902087    | »          | 945549    | »          | 862640    | »          |
| 1723034   | »          | 1890619   | »          | 457406    | »          | 164692    | »          | 1831334   | »          |
| 1367127   | »          | 1232535   | »          | 892444    | »          | 866459    | »          | 1787690   | »          |
| 1968038   | »          | 850810    | »          | 866460    | »          | 1181990   | »          | 1048226   | »          |
| 866457    | »          | 1103139   | »          | 817238    | »          | 1261986   | »          | 826406    | »          |
| 709575    | »          | 1890154   | »          | 836282    | »          | 166331    | »          | 943931    | »          |

## 400 ֆրանք շահույլ 550 թիվեր

|        |        |        |        |        |         |         |         |         |         |         |
|--------|--------|--------|--------|--------|---------|---------|---------|---------|---------|---------|
| 22111  | 314585 | 500223 | 649069 | 862637 | 960837  | 1103140 | 1237565 | 1506548 | 1668029 | 1831332 |
| 22112  | 318521 | 500224 | 649070 | 862638 | 960838  | 1103601 | 1239816 | 1506549 | 1668030 | 1831333 |
| 22113  | 318522 | 500225 | 709571 | 862639 | 960839  | 1103602 | 1239817 | 1506550 | 1670676 | 1831335 |
| 22114  | 318523 | 505696 | 709572 | 863666 | 960840  | 1103603 | 1239818 | 1520861 | 1670677 | 1840006 |
| 22115  | 318524 | 505697 | 709573 | 863668 | 966881  | 1103604 | 1239819 | 1520862 | 1670679 | 1840007 |
| 57811  | 318525 | 505698 | 709574 | 863669 | 966882  | 1103605 | 1239820 | 1520863 | 1670680 | 1840008 |
| 57812  | 320326 | 505699 | 741036 | 863670 | 966883  | 1107796 | 1261987 | 1520864 | 1708666 | 1840009 |
| 57813  | 320327 | 505700 | 741037 | 866456 | 966884  | 1107797 | 1261988 | 1520865 | 1708667 | 1846891 |
| 57814  | 320328 | 511226 | 741038 | 866458 | 966885  | 1107799 | 1261989 | 1533696 | 1708668 | 1846892 |
| 57815  | 320329 | 511227 | 741040 | 892441 | 970676  | 1107800 | 1261990 | 1533697 | 1708669 | 1846893 |
| 117701 | 338796 | 511228 | 776947 | 892442 | 970677  | 1108211 | 1285331 | 1533698 | 1708670 | 1846894 |
| 117702 | 338797 | 511229 | 776948 | 892443 | 970678  | 1108212 | 1285332 | 1533699 | 1723031 | 1853356 |
| 117703 | 338798 | 511230 | 776949 | 892445 | 970679  | 1108214 | 1285333 | 1533700 | 1723032 | 1853357 |
| 117704 | 338799 | 536576 | 776950 | 902086 | 986761  | 1108215 | 1285334 | 1537511 | 1723033 | 1853358 |
| 117705 | 338800 | 536577 | 799986 | 902088 | 986762  | 1124336 | 1285335 | 1537512 | 1723035 | 1853359 |
| 138476 | 362841 | 536578 | 799987 | 902089 | 986763  | 1124337 | 1325296 | 1537513 | 1733266 | 1853360 |
| 138477 | 362842 | 536579 | 799988 | 902090 | 986764  | 1124338 | 1325297 | 1537514 | 1733267 | 1858441 |
| 138478 | 362843 | 536580 | 799989 | 908901 | 986765  | 1124339 | 1325298 | 1537515 | 1733268 | 1858442 |
| 138479 | 362844 | 557976 | 799990 | 908902 | 1017231 | 1124340 | 1325299 | 1559501 | 1733269 | 1858443 |
| 138480 | 362845 | 557977 | 817236 | 908903 | 1017232 | 1135556 | 1325300 | 1559502 | 1733270 | 1858444 |
| 164691 | 428926 | 557978 | 817237 | 908904 | 1017233 | 1135557 | 1332892 | 1559503 | 1741346 | 1858445 |
| 164693 | 428927 | 557979 | 817239 | 908905 | 1017234 | 1135558 | 1332893 | 1559504 | 1741347 | 1881381 |
| 164694 | 428928 | 557980 | 817240 | 921366 | 1017235 | 1135559 | 1332894 | 1559505 | 1741348 | 1881382 |
| 166332 | 428929 | 571286 | 826407 | 921367 | 1037701 | 1135560 | 1332895 | 1588641 | 1741349 | 1881383 |
| 166333 | 428930 | 571287 | 826408 | 921368 | 1037702 | 1167716 | 1360316 | 1588642 | 1741350 | 1881384 |
| 166334 | 442226 | 571288 | 826409 | 921369 | 1037703 | 1167717 | 1360317 | 1588643 | 1787686 | 1881385 |
| 166335 | 442227 | 571289 | 826410 | 921370 | 1037704 | 1167718 | 1360318 | 1588644 | 1787687 | 1890451 |
| 169211 | 442228 | 571290 | 836281 | 923041 | 1037705 | 1167719 | 1360319 | 1588645 | 1787688 | 1890452 |
| 169212 | 442229 | 582921 | 836283 | 923042 | 1046831 | 1167720 | 1360320 | 1604851 | 1787689 | 1890453 |
| 169213 | 457407 | 582922 | 836284 | 923043 | 1046832 | 1181986 | 1367126 | 1604852 | 1792326 | 1890455 |
| 169214 | 457408 | 582923 | 836285 | 923044 | 1046833 | 1181987 | 1367128 | 1604853 | 1792327 | 1890616 |
| 169215 | 457409 | 582924 | 846276 | 923045 | 1046834 | 1181989 | 1367129 | 1604854 | 1792328 | 1890617 |
| 170926 | 457410 | 582925 | 846277 | 940836 | 1046835 | 1184166 | 1367130 | 1604855 | 1792329 | 1890618 |
| 170927 | 470501 | 599066 | 846278 | 940837 | 1048227 | 1184167 | 1391591 | 1607771 | 1792330 | 1890620 |
| 170928 | 470502 | 599067 | 846279 | 940838 | 1048228 | 1184168 | 1391592 | 1607772 | 1798396 | 1904312 |
| 170929 | 470503 | 599068 | 846280 | 940839 | 1048229 | 1184169 | 1391593 | 1607773 | 1798397 | 1904313 |
| 170930 | 470504 | 599069 | 850806 | 940840 | 1048230 | 1184170 | 1391594 | 1607774 | 1798398 | 1904314 |
| 212931 | 470505 | 599070 | 850807 | 943932 | 1076621 | 1207931 | 1391595 | 1658276 | 1798399 | 1904315 |
| 212932 | 479901 | 601591 | 850808 | 943933 | 1076622 | 1207932 | 1420926 | 1658277 | 1798400 | 1912531 |
| 212933 | 479902 | 601592 | 850809 | 943934 | 1076623 | 1207933 | 1420927 | 1658278 | 1804536 | 1912532 |
| 212934 | 479903 | 601593 | 853071 | 943935 | 1076624 | 1207934 | 1420928 | 1658279 | 1804537 | 1912533 |
| 284716 | 479904 | 601594 | 853072 | 945547 | 1076625 | 1207935 | 1420929 | 1658280 | 1804538 | 1912534 |
| 284717 | 479905 | 620966 | 853073 | 945548 | 1085371 | 1232531 | 1420930 | 1662066 | 1804539 | 1912535 |
| 284718 | 489036 | 620967 | 853074 | 945550 | 1085372 | 1232532 | 1454401 | 1662067 | 1804540 | 1937681 |
| 284719 | 489037 | 620968 | 853075 | 956061 | 1085373 | 1232533 | 1454402 | 1662068 | 1807676 | 1937682 |
| 284720 | 489038 | 620969 | 857841 | 956062 | 1085374 | 1232534 | 1454403 | 1662069 | 1807677 | 1937683 |
| 314581 | 489039 | 620970 | 857842 | 956063 | 1085375 | 1237561 | 1454404 | 1662070 | 1807678 | 1937684 |
| 314582 | 489040 | 649066 | 857843 | 956064 | 1103136 | 1237562 | 1454405 | 1668026 | 1807679 | 1968036 |
| 314583 | 500221 | 649067 | 857844 | 956065 | 1103137 | 1237563 | 1506546 | 1668027 | 1807680 | 1968037 |
| 314584 | 500222 | 649068 | 862636 | 960836 | 1103138 | 1237564 | 1506547 | 1668028 | 1831331 | 1968039 |

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

ԱՄԻՆ ՏԵՍԱՅ ԳԱՇՆԱԿԱՅ  
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էՌԱՌԻ  
հռչակաւոր գործատան

Գնումն եւ վաճառումն  
Փոխանակութիւնն հին դաշնակաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-  
նակներ ամսական վճարմամբ և մասնա-  
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-  
րաններէն Քլէնի դաշնակները, խիստ  
գիւրամատչելի գիներով:  
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն  
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր  
գիներով:

Բաժանորդագրութիւնն դաշնակաց  
յարդարման (accord):

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական  
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները չհինցնելու  
և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարու-  
թիւնք ամենայն խնամով և փութով կը  
կատարուին:

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար  
գիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա  
Սարայի դիմաց, Խրիսթաքի խան,  
Թիւ 10: (24—30)

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

ՏՐԱՆՍԵՐԻՆ ԾՈՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. Տարի

(Բ. Տպագրութիւն)

Վաւերացեալ յՈՒՍՈՒՆ. Խրհրդոյ և ընկա-  
ւալ է Մեղեալ Հիւր-Ռեանց

Յօրինեաց

Յ. Թ. ՀԻՆՏԼԵԱՆ

Քսաներկու գլուխներու մէջ հիշակաւ  
կերպով կ'ուսուցանէ Փռանս. Գերա-  
կանութեան Ա. Մասի կանոններն (Մա-  
սունք բանի). կանոններուն ի կիրա-  
ռութիւնն բազմաթիւ պարզ հրահանգ-  
ներ՝ ի ֆռանսերէն թարգմանելի. իւ-  
րաքանչիւր հրահանգէ վերջ խօսակցու-  
թիւնք: Իւրաքանչիւր գլխու վերջ ա-  
շակերտն հետաքրքրող Կալ: Գործոյն  
վերջը ընդհանուր Կալ և բառից ներհակ-  
ներու, նմանաձայններու, վայելչաբա-  
նութեան (élocution), զրուցատրու-  
թեան, քերականական լուծման, և ըն-  
վրայ պէս պէս վարժութիւնք:

Գին, զեղչեալ, 5 դրուշ:

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՑԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
Էսկի-Չապիէ փողոց, Թի 61

ՅԱՆԷԼԱ ԱԳՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

## ՍՍԼՍՆԵՍՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Բիւրքի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է  
Ի Պահչէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քա-  
նակութեամբ՝ արանց, կանանց  
և տղայոց համար՝ անխառն  
բրդէ, մանածէ, ևայլն, ուղ-  
ուած թանձրութեամբ և ուղ-  
ուած չափով յանձնարարու-  
թիւնք կ'ընդունուին ու պատ-  
րաստ կը ծախուին Փանէլա  
չապիկներ, վարտիքներ, մի-  
սօցուներ, ևայլն: Ապ-  
րանքները կը մրցին եւրոպա-  
կաններուն հետ թէ՛ աժանու-  
թեամբ, թէ՛ դիմացկունու-  
թեամբ և թէ՛ իրենց նուրբ  
ճաշակով: Յաճախորդք ամէն  
կերպիւ գոհ պիտի մնան:

22—24

## Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս եղբարց վաճառատունը

ԵՐԿՍԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բերշէմպէ բազար,  
Մահմուտիյէ—Ճատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-  
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ռուսական կախիակաղաք (ասմա քիլի-  
տի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյն  
ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, Երկրագործական բազմազան  
գործիներ, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մե-  
քենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանո-  
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով կ'երոպայէ բե-  
րել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԲԱՐՑ

20—24

70, Եօրկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

## ՍՍՐԱՓԵՍՆ ԵՂԲԱՐՑ

ԴԵՂԱԳՈՐԾՔ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԻՉՔ ՄՍՍՆԱԽՈՐ ԴԵՂԵՐՈՒ

Ս Ս Ր Ս Ա Ր Ա Ր Ի Լ Ա

Ս Ս Մ Փ Ո Ս Ն

ԲՈՊ ՍԱՐԱՑԵԱՆ

Արիւնը մաքրելու և վերանորոգելու  
համար 30 տեսակ բուսեղինօք յատկա-  
պէս պատրաստեալ ընտիր և ախորժա-  
համ օշարակ, որ միակ դարմանն է  
արեան անմաքրութենէն յառաջ եկած  
հիւանդութեանց, որպիսիք են՝ մոր-  
թային հիւանթութիւնք, սողնական  
ախտ, քոստութիւն, Թուզլու պալ-  
կամ, մալասըլ, գաղղիական ախտ, թէ՛  
հին և թէ՛ նոր՝ որու միակ հրաշալի  
դարմանն է: Գին՝ շիշը 25 դրուշ:

Մազ, պէխ և մօրուս երկարող և  
անոնց արմատներու հիւանդութիւնն  
անհետացնող: Իւր եղական ազդեցու-  
թիւնն արժանացած է շնորհակալու-  
թեանց և քաջալերական ուղերձներու:  
առաջին գեղն է իւր տեսակին մէջ:  
Գին՝ շիշը 15 դրուշ:

Ճոխ հաւաքածոյ ընտիր և ճաշակա-  
ւոր քաղցրաւիներու և ըմպելեաց. քա-  
ջասօ, շարթիչօք, մրգաքօնեակ, և ըն,  
և ըն, որք թէ՛ ճաշակի փափկութեամբ  
և թէ՛ գներու աժանութեամբ կրնան  
մրցիլ եւրոպականներու հետ:

Կը գտնուին Պոլիս, Սուլթան Համամ, Բիւշիւք Աշըր էֆ. խան, Թիւ 10:

Գաւառական յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

5—10